

<p><i>Համարը</i> 44/25  <i>Տիպը</i> Կոնվենցիա  <i>Սկզբնաղբյուրը</i> ՀՀՊՏ 1997.12.25/29  <i>Ընդունող մարմինը</i> Միավորված Ազգերի          Կազմակերպություն (ՄԱԿ)  <i>Ստորագրող մարմինը</i>  <i>Վավերացնող մարմինը</i>  <i>Ուժի մեջ մտնելու ամսաթիվը</i> 02.09.1990</p>	<p><i>Տեսակը</i> Մայր  <i>Կարգավիճակը</i> Գործում է  <i>Ընդունման վայրը</i> Նյու Յորք  <i>Ընդունման ամսաթիվը</i> 20.11.1989  <i>Ստորագրման ամսաթիվը</i>  <i>Վավերացման ամսաթիվը</i>  <i>Ուժը կորցնելու ամսաթիվը</i></p>
--	---

Ոչ պաշտոնական թարգմանություն

## Կ Ո Ն Վ Ե Ն Ց Ի Ա

### ԵՐԵՒԱՅԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

**ԸՆԴՈՒՆՎԵԼ Է ՄԱԿ-Ի ԳԼԽԱՎՈՐ ԱՍՍԵՐԼԵԱՅԻ 1989 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 20-Ի 44/25 ԲԱՆԱԶԵՎՈՎ ԵՎ ԲԱՑ Է ՍՈՐՐԱԳՐՄԱՆ, ՎԱՎԵՐԱՑՄԱՆ ԵՎ ՄԻԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ՈՒՇԻ ՄԵՋ Է ՄՏԵԼ 1990 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2-ԻՆ՝ ՀԱՄԱԶԱՅՆ 49-ԸՆԴՈՒՆՎԱԾԻ**

Գլխավոր ասամբլեան՝

վկայակոչելով իր նախորդ բանաձևերը, նախ և առաջ 1978 թվականի դեկտեմբերի 20-ի 33/166 և 1988 թվականի դեկտեմբերի 8-ի 43/112 բանաձևերը, ինչպես նաև Մարդու իրավունքների հանձնաժողովի և Տնտեսական ու սոցիալական խորհրդի բանաձևերը երեխայի իրավունքների մասին կոնվենցիայի հարցի վերաբերյալ,

ի գիտություն ընդունելով մասնավորապես Մարդու իրավունքների հանձնաժողովի 1989 թվականի մարտի 8-ի (1) 1989/57 բանաձևը, որով Հանձնաժողովը որոշել էր երեխայի իրավունքների մասին կոնվենցիայի նախագիծը Տնտեսական ու սոցիալական խորհրդի միջոցով ուղարկել Գլխավոր ասամբլեա, և Տնտեսական ու սոցիալական խորհրդի 1989 թվականի մայիսի 24-ի 1989/79 բանաձևը,

կրկին հաստատելով, որ երեխայի իրավունքները պահանջում են հատուկ պաշտպանություն և երեխաների դրության մշտական բարելավում ողջ աշխարհում, ինչպես նաև նրանց զարգացում ու դաստիարակություն խաղաղ ու ապահով պայմաններում,

խորապես անհանգստացած լինելով նրանով, որ աշխարհի շատ երկրներում երեխաների դրությունը ճգնաժամային է անհամազոր սոցիալական պայմանների, տարերային աղետների, զինված հակամարտությունների, շահագործման, անգրագիտության, սովի ու հիվանդությունների հետևանքով՝ ազգային ու միջազգային մակարդակներով,

գիտակցելով Միավորված ազգերի կազմակերպության Մանկական հիմնադրամի և Միավորված ազգերի կազմակերպության կարևոր դերը երեխաների բարեկեցության բարձրացմանն ու նրանց զարգացմանը նպաստելու գործում,

համոզված լինելով, որ երեխայի իրավունքների մասին միջազգային կոնվենցիան դրական ներդրում կլինի երեխաների իրավունքների պաշտպանության և նրանց բարեկեցության ապահովման գործում՝ որպես մարդու իրավունքների բնագավառում Միավորված ազգերի կազմակերպության նվաճումների օրինակի արժանավայել

ընդօրինակում,

ուշադրության առնելով այն հանգամանքը, որ 1989 թվականին լրանում է Երեխայի իրավունքների հռչակագրի (2) երեսուներորդ տարեդարձը և երեխայի միջազգային տարվա տասներորդ տարեդարձը,

1. երախտագիտություն է հայտնում Մարդու իրավունքների հանձնաժողովին Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայի նախագծի մշակումն ավարտելու առթիվ,

2. ընդունում է ստորագրման, վավերացման ու միանալու համար բացում Երեխայի իրավունքների մասին կոնվենցիան, որ բովանդակում է սույն բանաձևի հավելվածը,

3. կոչ է անում բոլոր անդամ պետություններին առաջնահերթ կարգով քննարկել Կոնվենցիայի ստորագրման, վավերացման կամ նրան միանալու հարցը և հույս է հայտնում, որ մոտ ժամանակներս այն ուժի մեջ կմտնի,

4. խնդրում է Գլխավոր քարտուղարին բոլոր անհրաժեշտ միջոցներն ապահովել և նպաստել Կոնվենցիայի մասին տեղեկատվության տարածմանը,

5. Միավորված ազգերի կազմակերպության հիմնարկներին ու կազմակերպություններին, ինչպես նաև միջկառավարական ու ոչ կառավարական կազմակերպություններին առաջարկում է աշխուժացնել իրենց ջանքերը Կոնվենցիայի մասին տեղեկատվություն տարածելու և նրա ավելի խոր ըմբռնմանը նպաստելու նպատակով,

6. խնդրում է Գլխավոր քարտուղարին Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայի վիճակի վերաբերյալ զեկուցում ներկայացնել Գլխավոր ասամբլեային նրա քառասունհինգերորդ նստաշրջանում,

7. որոշում է իր քառասունհինգերորդ նստաշրջանում գլխավոր քարտուղարի զեկուցումը քննարկել «Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայի իրագործումը» վերնագրով կետի տակ:

61-րդ լիագումար նիստ,  
20 նոյեմբերի, 1989 թվական

## Հ ա վ ե լ վ ա ծ

### ԿՈՆՎԵՆՑԻԱ ԵՐԵՒԱՅԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

#### Նախաբան

Սույն կոնվենցիայի մասնակից պետությունները,

համարելով, որ Միավորված ազգերի կազմակերպության Կանոնադրության մեջ հռչակված սկզբունքների համաձայն, հասարակության բոլոր անդամների արժանապատվության, հավասար և անկապտելի իրավունքների ճանաչումը հիմք է հանդիսանում Երկրագնդի վրա ազատության, արդարության և խաղաղության ապահովման համար,

հաշվի առնելով, որ Միավորված ազգերի ժողովուրդները Կանոնադրության մեջ հավաստել են իրենց հավատը մարդու հիմնական իրավունքների, մարդկային անհատի արժանապատվության և արժեքավորության նկատմամբ ու լի են սոցիալական առաջընթացին ու կյանքի պայմանների բարելավմանն ավելի մեծ ազատության պայմաններում նպաստելու վճռականությամբ,

ընդունելով, որ Միավորված ազգերի կազմակերպությունը Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրում (3) և մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային պայմանագրերում (4) հռչակել ու համաձայնել է, որ յուրաքանչյուր մարդ պետք է օժտված լինի նրանցում նշված բոլոր իրավունքներով ու ազատություններով՝ առանց որևէ տարբերության այնպիսի հատկանիշներով, ինչպիսիք են ռասան, մաշկի գույնը, սեռը, լեզուն, կրոնը, քաղաքական և այլ համոզմունքները, ազգային կամ սոցիալական ծագումը, գույքային դրությունը, ծնունդը կամ այլ հանգամանքներ,

հիշեցնելով, որ Միավորված ազգերի կազմակերպությունը Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրում հայտարարել է, որ երեխաները ունեն հատուկ հոգածության և օգնության իրավունք,

համոզված լինելով այն բանում, որ ընտանիքին, որպես հասարակության հիմնական բջի և նրա բոլոր անդամների ու հատկապես երեխաների աճի ու բարեկեցության բնական միջավայրի, պետք է ցուցաբերվի

անհրաժեշտ պաշտպանություն և աջակցություն՝ հասարակության շրջանակներում իր վրա պարտականություններ ստանձնել կարողանալու համար,

ընդունելով, որ երեխային, իր անհատականության լիակատար և բազմակողմանի զարգացման համար, անհրաժեշտ է մեծանալ ընտանեկան շրջապատում, երջանկության, սիրո և ըմբռնման մթնոլորտում,

համարելով, որ երեխան հասարակության մեջ ինքնուրույն կյանքի պետք է նախապատրաստվի և դաստիարակվի Միավորված ազգերի կազմակերպության Կանոնադրության մեջ հռչակված իդեալների, հատկապես խաղաղության, արժանապատվության, հանդուրժողականության, ազատության, հավասարության և համերաշխության գաղափարների ոգով,

հաշվի առնելով, որ երեխայի նման հատուկ պաշտպանության անհրաժեշտությունը նախատեսված էր 1924 թ. Ժնևյան (5) և 1959 թ. նոյեմբերի 20-ին Գլխավոր ասամբլեայի ընդունած Երեխայի իրավունքների հռչակագրերում և ճանաչված է Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրում, Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրում (մասնավորապես 23 և 24 հոդվածներում), Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագրում (մասնավորապես 10-րդ հոդվածում), ինչպես նաև երեխաների բարեկեցության հարցերով զբաղվող հատուկ մասնագիտացված հիմնարկությունների և միջազգային կազմակերպությունների կանոնադրություններում ու համապատասխան փաստաթղթերում,

նկատի առնելով, որ ըստ Գլխավոր ասամբլեայի 1959 թ. նոյեմբերի 20-ին ընդունած Երեխայի իրավունքների հռչակագրի «երեխան, նկատի առնելով նրա ֆիզիկական և մտավոր անհասությունը, կարիք ունի հատուկ պաշտպանության և հոգատարության, ներառյալ պատշաճ իրավական պաշտպանությունը ծնվելուց առաջ և հետո» (6),

հենվելով երեխաների պաշտպանությանը և բարեկեցությանը վերաբերող սոցիալական և իրավական սկզբունքների, հատկապես երեխաներին դաստիարակության տալու և նրանց ազգային ու միջազգային մակարդակներով որդեգրման դեպքերի մասին հռչակագրի (7), Անչափահասների նկատմամբ արդարադատություն իրականացնելու վերաբերյալ Միավորված ազգերի կազմակերպության նվազագույն ստանդարտ կանոնների («Պեկինյան կանոններ») (8) և Արտակարգ իրավիճակներում ու զինված ընդհարումների ժամանակ կանանց և երեխաների պաշտպանության մասին հռչակագրի(9) դրույթների վրա,

ընդունելով, որ աշխարհի բոլոր երկրներում կան բացառիկ ծանր պայմաններում ապրող երեխաներ, և այդպիսի երեխաները կարիք ունեն հատուկ ուշադրության,

պատշաճ կերպով հաշվի առնելով երեխայի պաշտպանության և բազմակողմանի զարգացման համար յուրաքանչյուր ժողովրդի ավանդույթների և մշակութային արժեքների կարևորությունը,

ընդունելով յուրաքանչյուր երկրում, մասնավորապես զարգացող երկրներում, երեխաների կյանքի պայմանների բարելավման համար միջազգային համագործակցության կարևորությունը, համաձայնեցին ներքոհիշյալի մասին.

## Մ ա ս Ի.

### ՀՈՂՎԱԾ 1

Սույն կոնվենցիայի նպատակների համար երեխա է համարվում 18 տարեկան չդարձած յուրաքանչյուր մարդկային էակ, եթե նրա նկատմամբ կիրառվող օրենքով նա չափահասության չի հասնում ավելի վաղ:

### ՀՈՂՎԱԾ 2

1. Մասնակից պետությունները հարգում և ապահովում են սույն կոնվենցիայով նախատեսված բոլոր իրավունքները իրենց իրավասության տակ գտնվող յուրաքանչյուր երեխայի համար՝ առանց որևէ խտրականության, անկախ ռասայից, մաշկի գույնից, սեռից, լեզվից, կրոնից, քաղաքական և այլ համոզմունքներից,

ազգային, էթնիկական կամ սոցիալական ծագումից, գույքային դրությունից, առողջական վիճակից և երեխայի ծնունդից, նրա ծնողներից կամ օրինական խնամակալներից կամ որևէ այլ հանգամանքից: 2. Մասնակից պետությունները ձեռնարկում են անհրաժեշտ բոլոր միջոցները՝ ապահովելու երեխայի պաշտպանությունը նրա, նրա ծնողների կամ օրինական խնամակալների կամ ընտանիքի այլ անդամների կարգավիճակի, գործունեության, արտահայտած հայացքների կամ համոզմունքների հիման վրա առաջացող խտրականության ու պատժի բոլոր ձևերից:

### **ՀՈՂՎԱԾ 3**

1. Երեխաների նկատմամբ բոլոր գործողություններում, անկախ այն բանից, թե դրանք ձեռնարկվում են սոցիալական ապահովության հարցերով զբաղվող պետական կամ մասնավոր հիմնարկների, դատարանների, վարչական կամ օրենսդրական մարմինների կողմից, առաջնահերթ ուշադրություն է դարձվում երեխայի շահերի առավել ապահովմանը:

2. Մասնակից պետությունները պարտավորվում են երեխային ապահովել նրա բարեկեցության համար անհրաժեշտ պաշտպանությամբ և հոգատարությամբ, նկատի ունենալով նրա ծնողների, խնամակալների կամ օրենքով նրա համար պատասխանատվություն կրող այլ անձանց իրավունքներն ու պարտականությունները, և այդ նպատակով ձեռնարկվում են համապատասխան բոլոր օրենսդրական ու վարչական միջոցները:

3. Մասնակից պետություններն ապահովում են երեխաների մասին հոգալու կամ նրանց պաշտպանելու համար պատասխանատու հիմնարկների, ծառայությունների և մարմինների համապատասխանությունը իրավասու մարմինների կողմից սահմանված չափանիշներին, մասնավորապես անվտանգության և առողջապահության բնագավառներում, դրանց թվաքանակի և անձնակազմի պիտանիության, ինչպես նաև իրավասու հսկողություն սահմանելու իմաստով:

### **ՀՈՂՎԱԾ 4**

Մասնակից պետությունները ձեռնարկում են անհրաժեշտ բոլոր օրենսդրական, վարչական և այլ միջոցները սույն կոնվենցիայով ճանաչված իրավունքների իրականացման համար: Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների վերաբերյալ մասնակից պետություններն այդպիսի միջոցներ ձեռնարկում են իրենց տրամադրության տակ եղած ռեսուրսների առավելագույն չափի և, անհրաժեշտության դեպքում, միջազգային համագործակցության շրջանակներում:

### **ՀՈՂՎԱԾ 5**

Մասնակից պետությունները հարգում են ծնողների, համապատասխան դեպքերում նաև տեղական սովորույթներով նախատեսված ընդլայնված ընտանիքի կամ համայնքի անդամների, խնամակալների կամ երեխայի համար օրենքով պատասխանատվություն կրող այլ անձանց պատասխանատվությունը, իրավունքները և պարտականությունները՝ սույն կոնվենցիայով ճանաչված իրավունքներն իրականացնելիս երեխային պատշաճ կերպով ղեկավարելու և ուղղություն տալու և այդ ամենը երեխայի զարգացող ունակություններին համապատասխան կատարելու գործում:

### **ՀՈՂՎԱԾ 6**

1. Մասնակից պետություններն ընդունում են, որ յուրաքանչյուր երեխա ունի կյանքի անկապտելի իրավունք:  
2. Մասնակից պետությունները հնարավոր առավելագույն չափով ապահովում են երեխայի գոյատևումը և առողջ զարգացումը:

## **ՀՈՂՎԱԾ 7**

1. Երեխան գրանցվում է ծնվելուց հետո և ծննդյան պահից ձեռք է բերում անվան և քաղաքացիության իրավունք, ինչպես նաև, որքան դա հնարավոր է, իր ծնողներին ճանաչելու և նրանց խնամքի իրավունք:

2. Մասնակից պետություններն այդ իրավունքների և իրենց պարտավորությունների իրականացումն ապահովում են ըստ ազգային օրենսդրությունների և այդ բնագավառի համապատասխան միջազգային փաստաթղթերի, մասնավորապես այն դեպքում, երբ այլ կերպ երեխան քաղաքացիություն չի ունենա:

## **ՀՈՂՎԱԾ 8**

1. Մասնակից պետությունները պարտավորվում են օրենքով նախատեսված կարգով, չթույլատրելով հակաօրինական միջամտություն, հարգել իր անհատականությունը, ներառյալ քաղաքացիությունը, անունը և ընտանեկան կապերն ապահովելու երեխայի իրավունքը:

2. Եթե երեխան անօրինական կերպով զրկվում է իր անհատականության կամ դրա մի մասի տարրերից, մասնակից պետությունները նրան իր անհատականության շուտավուրյթ վերականգնման համար ապահովում են անհրաժեշտ օգնությամբ ու պաշտպանությամբ:

## **ՀՈՂՎԱԾ 9**

1. Մասնակից պետություններն ապահովում են, որպեսզի երեխան, հակառակ ծնողների ցանկության, չբաժանվի նրանցից, բացառությամբ այն դեպքերի, երբ իրավասու մարմինները, դատարանի որոշման, գործող օրենքի և ընթացակարգի համաձայն, սահմանում են, որ այդպիսի բաժանումն անհրաժեշտ է երեխայի շահերը լավագույնս պաշտպանելու տեսակետից: Նման որոշում կարող է անհրաժեշտ լինել այս կամ այն կոնկրետ դեպքում, օրինակ, երբ ծնողները դաժանորեն են վարվում երեխայի հետ կամ հոգ չեն տանում նրա մասին, կամ երբ ծնողներն առանձին են ապրում և հարկ է վճիռ կայացնել երեխայի բնակության վայրի վերաբերյալ:

2. Սույն հոդվածի 1-ին կետին վերաբերող ցանկացած քննության ընթացքում բոլոր շահագրգիռ կողմերին հնարավորություն է տրվում մասնակցել և շարադրել իրենց տեսակետները:

3. Մասնակից պետությունները հարգում են ծնողներից մեկից կամ երկուսից բաժանվող երեխայի իրավունքը՝ կանոնավոր անձնական հարաբերություններ և ուղղակի կապեր պահպանելու ծնողների հետ, բացառությամբ այն դեպքերի, երբ դա հակասում է երեխայի լավագույն շահերին:

4. Այն դեպքում, երբ այդպիսի բաժանումը բխում է մասնակից պետության ընդունած որևէ որոշումից, օրինակ՝ կալանքի, աքաղի, տեղահանության, մեկ կամ երկու ծնողների կամ երեխայի մահվան (ներառյալ այնպիսի մահը, որը վրա է հասել ցանկացած պատճառով, տվյալ անձի՝ պետության տրամադրության տակ գտնված ժամանակ) հետևանքով, մասնակից պետությունը ծնողներին, երեխային կամ, եթե դա անհրաժեշտ է, ընտանիքի այլ անդամի, նրանց խնդրանքով, տրամադրում է համապատասխան տեղեկություն ընտանիքի բացակա անդամի (անդամների) գտնվելու վայրի վերաբերյալ, եթե այդպիսի տեղեկատվությունը վնաս չի հասցնում երեխայի բարեկեցությանը: Մասնակից պետությունները հետազայում ապահովում են, որպեսզի նման խնդրանքով դիմելը ինքնըստինքյան չհանգեցնի անբարենպաստ հետևանքների համապատասխան անձի (անձանց) համար:

## **ՀՈՂՎԱԾ 10**

1. 9-րդ հոդվածի 1-ին կետով մասնակից պետությունների ստանձնած պարտավորության համաձայն, ընտանիքի վերամիավորման նպատակով երեխայի կամ նրա ծնողների դիմումները մասնակից պետություն ժամանելու կամ այնտեղից մեկնելու մասին մասնակից պետությունների կողմից պետք է քննարկվեն դրական, մարդասիրական և արագ կարգով: Մասնակից պետությունն այնուհետև ապահովում է, որպեսզի այդպիսի խնդրանքով դիմելը դիմողի և նրա ընտանիքի անդամների համար չհանգեցնի անբարենպաստ հետևանքների:

2. Երեխան, որի ծնողները բնակվում են տարբեր պետություններում, իրավունք ունի կանոնավոր կերպով, բացառությամբ հատուկ հանգամանքների, անձնական հարաբերություններ և ուղղակի կապեր պահպանել երկու ծնողների հետ: Այդ նպատակով և համաձայն 9-րդ հոդվածի 2-րդ կետով մասնակից պետությունների ստանձնած պարտավորության, մասնակից պետությունները հարգում են ցանկացած, այդ թվում նաև սեփական երկրից հեռանալու և սեփական երկիր վերադառնալու՝ երեխայի և նրա ծնողների իրավունքը: Ցանկացած երկիրը լքելու իրավունքի առթիվ գործում են միայն այնպիսի սահմանափակումներ, որոնք նախատեսված են օրենքով և անհրաժեշտ են պետական անվտանգության, հասարակական կարգուկանոնի, բնակչության առողջության կամ բարոյականության կամ այլ անձանց իրավունքների և ազատությունների պահպանման համար և համատեղելի են սույն կոնվենցիայով ճանաչված այլ իրավունքների հետ:

## **ՀՈՂՎԱԾ 11**

1. Մասնակից պետությունները միջոցներ են ձեռնարկում երեխաների ապօրինի տեղափոխումների և արտասահմանից չվերադառնալու դեմ պայքարելու համար:

2. Այդ նպատակով մասնակից պետություններն աջակցում են երկկողմ կամ բազմակողմ համաձայնագրերի կնքմանը կամ գործող համաձայնագրերին միանալուն:

## **ՀՈՂՎԱԾ 12**

1. Իր սեփական հայացքները ձևակերպելու ընդունակ երեխայի համար մասնակից պետություններն ապահովում են դրանք ազատորեն արտահայտելու իրավունք այն բոլոր դեպքերում, որոնք վերաբերում են երեխային: Ընդ որում, երեխայի հայացքների նկատմամբ ցուցաբերվում է նրա տարիքին և հասունությանը համապատասխան պատշաճ ուշադրություն:

2. Այդ նպատակով երեխային, մասնավորապես, հնարավորություն է տրվում իրեն վերաբերող ցանկացած դատական կամ վարչական քննության ժամանակ ունկնդրվել թե անմիջականորեն, թե իր ներկայացուցչի կամ համապատասխան մարմնի միջոցով, ազգային օրենսդրության դատավարական նորմերով նախատեսված կարգով:

## **ՀՈՂՎԱԾ 13**

1. Երեխան իրավունք ունի ազատորեն արտահայտել իր կարծիքը. այդ իրավունքը ներառում է երեխայի ընտրությամբ բանավոր, գրավոր կամ տպագիր ձևով, արվեստի ստեղծագործության տեսքով կամ այլ միջոցների գործադրմամբ, անկախ սահմաններից, ցանկացած բնույթի տեղեկատվություն և գաղափարներ որոնելու, ստանալու և հաղորդելու ազատությունը:

2. Այդ իրավունքի իրագործումը կարող է ենթարկվել որոշ սահմանափակումների, սակայն այդ սահմանափակումները կարող են լինել միայն այնպիսիք, որոնք նախատեսված են օրենքով և անհրաժեշտ են

ա) այլ անձանց իրավունքները և հեղինակությունը հարգելու, կամ

բ) պետական անվտանգությունը և հասարակական կարգը (order public), կամ բնակչության առողջությունը և բարոյականությունը պաշտպանելու համար:

## **ՀՈՂՎԱԾ 14**

1. Մասնակից պետությունները հարգում են մտքի, խղճի և կրոնի ազատության՝ երեխայի իրավունքը:

2. Մասնակից պետությունները հարգում են ծնողների և, համապատասխան դեպքերում, օրինական խնամակալների պարտականությունները՝ իր իրավունքներն իրականացնելիս երեխային ղեկավարելու նրա զարգացող ընդունակություններին համապատասխան մեթոդով:

3. Իր կրոնը կամ հավատը դավանելու ազատությունը կարող է ենթարկվել միայն այնպիսի

սահմանափակումների, որոնք նախատեսված են օրենքով և անհրաժեշտ են պետական անվտանգության, հասարակական կարգի, բնակչության բարոյականության և առողջության կամ այլ անձանց հիմնական իրավունքների և ազատությունների պահպանման համար:

### **ՀՈՂՎԱԾ 15**

1. Մասնակից պետություններն ընդունում են միավորումների մեջ մտնելու և խաղաղ հավաքների մասնակցելու երեխայի ազատության իրավունքը:

2. Այդ իրավունքի իրականացման առթիվ չի կարող կիրառվել որևէ սահմանափակում, բացի նրանցից, որոնք գործադրվում են օրենքի համաձայն և ժողովրդավարական հասարակության մեջ անհրաժեշտ են հանուն պետական կամ հասարակական անվտանգության, հասարակական կարգի (ordre public), բնակչության առողջության կամ բարոյականության կամ այլ անձանց իրավունքների և ազատությունների պաշտպանության շահերի:

### **ՀՈՂՎԱԾ 16**

1. Ոչ մի երեխա անձնական, ընտանեկան կյանքի, գրագրության գաղտնիության կամ բնակարանի անձեռնմխելիության իր իրավունքներն իրականացնելիս չի կարող դառնալ կամայական կամ ապօրինի միջամտության կամ իր պատվի և հեղինակության նկատմամբ ապօրինի ոտնձգության օբյեկտ:

2. Երեխան այդպիսի միջամտությունից և ոտնձգությունից օրենքի կողմից պաշտպանության իրավունք ունի:

### **ՀՈՂՎԱԾ 17**

Մասնակից պետություններն ընդունում են զանգվածային լրատվության միջոցների կարևոր դերը և երեխայի համար ապահովում են ազգային ու միջազգային զանազան աղբյուրների տեղեկատվությունների ու նյութերի մատչելիությունը, հատկապես այնպիսի տեղեկատվությունների ու նյութերի, որոնք միտված են երեխայի սոցիալական, հոգևոր և բարոյական բարեկեցությանը, ինչպես նաև նրա ֆիզիկական ու հոգեկան առողջ զարգացմանն աջակցելուն: Այդ նպատակով մասնակից պետությունները

ա) խրախուսում են զանգվածային լրատվության միջոցների կողմից այնպիսի տեղեկատվության ու նյութերի տարածումը, որոնք օգտակար են երեխային սոցիալական և մշակութային առումով և բխում են 29-րդ հոդվածի ոգուց,

բ) խրախուսում են միջազգային համագործակցությունը զանազան մշակութային, ազգային և միջազգային աղբյուրներից այդպիսի տեղեկատվության ու նյութերի նախապատրաստման, փոխանակման ու տարածման գործում,

գ) խրախուսում են մանկական գրականության լույսընծայումն ու տարածումը,

դ) խրախուսում են զանգվածային լրատվության միջոցներին՝ հատուկ ուշադրություն դարձնելու ազգային փոքրամասնությունների կամ բնիկ ազգաբնակչության այս կամ այն խմբին պատկանող երեխաների լեզվական պահանջմունքներին,

ե) հաշվի առնելով 13 և 18-րդ հոդվածների դրույթները, խրախուսում են երեխայի բարեկեցությանը վնասող տեղեկատվությունից և նյութերից նրան պաշտպանելու պատշաճ սկզբունքների մշակումը:

### **ՀՈՂՎԱԾ 18**

1. Մասնակից պետությունները գործադրում են բոլոր հնարավոր ջանքերը՝ երեխայի դաստիարակության և զարգացման գործում երկու ծնողների ընդհանուր և հավասար պատասխանատվության սկզբունքի ճանաչումն ապահովելու համար: Ծնողները կամ համապատասխան դեպքերում՝ օրինական խնամակալները երեխայի

դաստիարակության ու զարգացման համար կրում են հիմնական պատասխանատվությունը: Երեխայի լավագույն շահերը նրանց հիմնական հոգածության առարկան են:

2. Սույն կոնվենցիայում շարադրված իրավունքների երաշխիքներին և իրականացմանը նպաստելու նպատակով մասնակից պետությունները ծնողներին և օրինական խնամակալներին անհրաժեշտ օգնություն են ցույց տալիս երեխաների դաստիարակության առթիվ իրենց պարտականությունները կատարելու գործում և ապահովում են մանկական հիմնարկների ցանցի զարգացումը:

3. Մասնակից պետությունները ձեռնարկում են անհրաժեշտ բոլոր միջոցները, որպեսզի աշխատող ծնողները իրավունք ունենան օգտվելու իրենց համար նախատեսված և երեխաների խնամքի հարցերով զբաղվող ծառայություններից և հիմնարկություններից:

## **ՀՈՂՎԱԾ 19**

1. Մասնակից պետությունները ձեռնարկում են անհրաժեշտ բոլոր օրենսդրական, վարչական, սոցիալական և լուսավորչական միջոցները ծնողների, օրինական խնամակալների կամ երեխայի մասին հոգ տանող ցանկացած այլ անձի կողմից երեխային ֆիզիկական կամ հոգեկան ճնշման ենթարկելու բոլոր ձևերից, վիրավորանքներից կամ չարաշահումներից, հոգատարության բացակայությունից կամ անուշադրությունից, կոպիտ վերաբերմունքից կամ շահագործումից, ներառյալ սեռական չարաշահումը, պաշտպանելու նպատակով:

2. Պաշտպանության այդպիսի միջոցներն անհրաժեշտության դեպքում ներառում են սոցիալական ծրագրերի մշակման արդյունավետ ընթացակարգեր՝ նպատակ ունենալով պահանջվող աջակցություն ցույց տալ երեխային և այն անձանց, ովքեր հոգ են տանում նրա մասին, ինչպես նաև երեխայի նկատմամբ դաժան վերաբերմունքի վերը նշված դեպքերը կանխարգելելու և բացահայտելու, դրանց մասին տեղեկացնելու, քննարկման հանձնելու, հետաքննելու, բուժելու և այդ առթիվ հետագա միջոցներ ձեռնարկելու այլ ձևերի իրականացման, այդ թվում, ըստ անհրաժեշտության, դատական գործ հարուցելու համար:

## **ՀՈՂՎԱԾ 20**

1. Ժամանակավորապես կամ մշտապես իր ընտանեկան շրջապատից զրկված կամ իր լավագույն շահերի տեսակետից այդպիսի շրջապատում մնալ չկարողացող երեխան պետության կողմից տրամադրվող հասուկ պաշտպանության և օգնության իրավունք ունի:

2. Մասնակից պետություններն իրենց ազգային օրենքներին համապատասխան ապահովում են խնամքի փոխարինությունն այդպիսի երեխայի նկատմամբ:

3. Այդպիսի խնամքը կարող է ներառել, մասնավորապես, դաստիարակության հանձնելը, գրավը՝ «ղաֆալա»՝ ըստ իսլամական իրավունքի, որդեգրումը կամ, անհրաժեշտության դեպքում, երեխաներին խնամող համապատասխան հիմնարկներում տեղավորելը: Խնամքը փոխելու տարբերակների քննարկման ժամանակ անհրաժեշտ է պատշաճ կերպով հաշվի առնել երեխայի դաստիարակության հաջորդայնությունն ապահովելու ցանկալիությունը և նրա էթնիկական ծագումը, կրոնական ու մշակութային պատկանելիությունը և մայրենի լեզուն:

## **ՀՈՂՎԱԾ 21**

Որդեգրման համակարգի գոյությունն ընդունող կամ թույլատրող մասնակից պետություններն ապահովում են, որ երեխայի լավագույն շահերը հաշվի առնվեն առաջնահերթ կերպով, և նրանք.

ա) ապահովում են, որ երեխայի որդեգրումը թույլատրվի միայն իրավասու իշխանությունների կողմից, որոնք կիրառվող օրենքի և ընթացակարգի համաձայն և գործին առնչվող ողջ հավաստի տեղեկատվության հիման վրա որոշում են որդեգրման թույլատրելիությունը՝ նկատի առնելով երեխայի կարգավիճակն ըստ ծնողների, հարազատների և օրինական խնամակալների հետ առնչությունների և այն, որ հարկ եղած դեպքում շահագրգիռ անձինք, հնարավոր անհրաժեշտ խորհրդատվության հիման վրա, իրենց գիտակցված համաձայնությունն են տվել



որդեգրմանը,

բ) ընդունում են, որ այլ երկրում որդեգրումը կարող է դիտվել որպես երեխայի նկատմամբ խնամքի այլընտրանքային միջոց, եթե երեխան չի կարող հանձնվել դաստիարակության կամ տեղավորվել այնպիսի ընտանիքում, որը կարողանար ապահովել նրա դաստիարակությունը կամ որդեգրումը, և եթե երեխայի ծնված երկրում որևէ մի տեսակի խնամք ապահովելն անհնար է,

գ) այլ երկրում երեխայի որդեգրման դեպքում ապահովում են այնպիսի երաշխիքների ու նորմերի կիրառումը, որոնք այդ առնչությամբ գործում են երկրի ներսում,

դ) ձեռնարկում են անհրաժեշտ բոլոր միջոցները, որպեսզի այլ երկրում որդեգրման դեպքում երեխայի կացությունը չհանգեցնի դրա հետ կապված անձանց համար չարդարացված ֆինանսական օգուտներ ստանալուն,

ե) հարկ եղած դեպքում երկկողմ կամ բազմակողմանի պայմանավորվածությունների և համաձայնագրերի կնքման ուղիով նպաստում են սույն հոդվածի նպատակներին հասնելուն և դրա հիման վրա ձգտում են ապահովել, որ երեխային այլ երկրում տեղավորելը իրականացվի իրավասու իշխանությունների կամ մարմինների կողմից:

## **ՀՈՂՎԱԾ 22**

1. Մասնակից պետություններն անհրաժեշտ միջոցներ են ձեռնարկում, որպեսզի փախստականի կարգավիճակ ստանալ ցանկացող, գործող միջազգային կամ ներքին իրավունքի ու ընթացակարգի համաձայն փախստական համարվող երեխայի համար, ինչպես ծնողների կամ ցանկացած այլ անձանց կողմից ուղեկցվելու, այնպես էլ չուղեկցվելու դեպքում ապահովվի պատշաճ պաշտպանություն և մարդասիրական օգնություն՝ կիրառելի իրավունքներից օգտվելու համար, որոնք շարադրված են սույն կոնվենցիայում և մարդու իրավունքների վերաբերյալ այլ միջազգային կամ մարդասիրական փաստաթղթերում, որոնց մասնակիցն են նշված պետությունները:

2. Այդ նպատակով մասնակից պետությունները երբ իրենք դա անհրաժեշտ են համարում, աջակցություն են ցույց տալիս Միավորված ազգերի կազմակերպության և այլ իրավասու միջկառավարական կազմակերպությունների կամ Միավորված ազգերի կազմակերպության հետ համագործակցող այլ ոչ կառավարական կազմակերպությունների ջանքերին՝ այդպիսի երեխային պաշտպանություն և օգնություն ցույց տալու և ցանկացած այլ փախստական երեխայի ծնողների կամ ընտանիքի այլ անդամների որոնումների գործում՝ իր ընտանիքի հետ միանալու համար անհրաժեշտ տեղեկատվություն ստանալու նպատակով: Եթե ծնողները կամ ընտանիքի մյուս անդամները չեն գտնվում, այդ երեխային այնպիսի պաշտպանություն է ցույց տրվում, ինչպիսին ցույց է տրվում ինչ-որ պատճառով իր ընտանեկան շրջապատից մշտապես կամ ժամանակավորապես զրկված ցանկացած այլ երեխայի, ինչպես դա նախատեսված է սույն կոնվենցիայով:

## **ՀՈՂՎԱԾ 23**

1. Մասնակից պետություններն ընդունում են, որ մտավոր կամ ֆիզիկական ոչ լիարժեք երեխան պետք է վարի լիարժեք և արժանավայել կյանք այնպիսի պայմաններում, որոնք ապահովում են նրա արժանապատվությունը, նպաստում են ինքնավստահությանը և դյուրացնում են նրա ակտիվ մասնակցությունը հասարակական կյանքին:

2. Մասնակից պետություններն ընդունում են ոչ լիարժեք երեխայի՝ հատուկ հոգաձույթյան ենթակա լինելու իրավունքը, խրախուսում և, միջոցների առկայության դեպքում, դրա իրավունքն ունեցող երեխային և նրա մասին հոգ տանելու համար պատասխանատու անձանց ցույց են տալիս օգնություն, եթե այդ առթիվ խնդրանք է ներկայացվել և եթե դա համապատասխանում է երեխայի վիճակին, ծնողների կամ նրա նկատմամբ խնամք տանող այլ անձանց դրությամբ:

3. Որպես ոչ լիարժեք երեխայի հատուկ կարիքների ճանաչում, սույն հոդվածի 2-րդ կետով նախատեսված օգնությունը նրան տրվում է ըստ հնարավորի անվճար, հաշվի առնելով ծնողների կամ երեխայի նկատմամբ խնամք տանող անձանց ֆինանսական միջոցները, և նպատակ ունի ոչ լիարժեք երեխայի համար ապահովել կրթություն, մասնագիտական պատրաստություն, բժշկական սպասարկում ստանալու, առողջությունը վերականգնելու,

աշխատանքային գործունեության նախապատրաստվելու, հանգստի միջոցներից օգտվելու համար արդյունավետ հնարավորություն, որը կհանգեցնի երեխային առավել լիակատար սոցիալական կյանքում ընդգրկելուն և նրա անհատականության զարգացմանը, ներառյալ մշակութային և հոգևոր զարգացումը:

4. Մասնակից պետությունները միջազգային համագործակցության ոգով նպաստում են ոչ լիարժեք երեխաների բժշկական, հոգեբանական և ֆունկցիոնալ բուժման ու կանխարգելիչ առողջապահության բնագավառներում համապատասխան տեղեկատվության փոխանակմանը, ներառյալ վերականգնման, հանրակրթական և մասնագիտական պատրաստության մեթոդների մասին տեղեկատվության տարածումը և դրանց մատչելիության ապահովումը, որպեսզի մասնակից պետություններին թույլ տրվի բարելավել իրենց հնարավորություններն ու գիտելիքները և ընդլայնել իրենց փորձն այդ բնագավառում: Այդ կապակցությամբ հատուկ ուշադրություն պետք է դարձվի զարգացող երկրների պահանջներին:

## **ՀՈՂՎԱԾ 24**

1. Մասնակից պետություններն ընդունում են առողջապահական համակարգի և հիվանդությունների բուժման ու առողջության վերականգնման առավել կատարյալ ծառայություններից օգտվելու երեխայի իրավունքը: Մասնակից պետությունները ձգտում են ապահովել, որպեսզի ոչ մի երեխա չգրկվի առողջապահական համակարգի նման ծառայություններից օգտվելու իր իրավունքից:

2. Մասնակից պետությունները ձգտում են տվյալ իրավունքի լրիվ իրականացմանը և, մասնավորապես, անհրաժեշտ միջոցներ են ձեռնարկում.

ա) նորածինների և մանկական մահացության մակարդակն իջեցնելու համար,

բ) բոլոր երեխաների առողջության պահպանումը և անհրաժեշտ բժշկական օգնության տրամադրումն ապահովելու համար, առաջնահերթ ուշադրություն դարձնելով առաջին բժշկասանիտարական օգնությանը,

գ) հիվանդությունների և թերսնման դեմ պայքարելու համար, այդ թվում բժշկասանիտարական առաջին օգնության շրջանակներում, ի թիվս այլ բաների՝ հեշտ մատչելի տեխնոլոգիաների և բավականաչափ սննդարար մթերքների և խմելու մաքուր ջրի տրամադրման ուղիով, ուշադրության առնելով շրջակա միջավայրի աղտոտման վտանգավորությունն ու ռիսկը,

դ) առողջության պահպանման առումով մայրերին նախաձննդյան և հետձննդյան շրջանում պատշաճ ծառայություններ տրամադրելու համար,

ե) երեխաների սննդի և առողջության, կրծքով կերակրելու առավելությունների, հիգիենայի, երեխայի բնական միջավայրի սանիտարիայի և դժբախտ պատահարները կանխելու, ինչպես նաև երեխաների կրթության մատչելիության և այդօրինակ գիտելիքներ գործադրելիս նրանց աջակցելու մասին հասարակության բոլոր խավերի, մասնավորապես ծնողների և երեխաների իրազեկությունն ապահովելու համար,

զ) լուսավորչական աշխատանքի և կանխարգելիչ բժշկական օգնության բնագավառում ծառայությունների զարգացման և ընտանիքի չափերի պլանավորման համար:

3. Մասնակից պետությունները ձեռնարկում են ցանկացած արդյունավետ և անհրաժեշտ միջոց երեխայի առողջության վրա բացասաբար ազդող ավանդական սովորությունների վերացման նպատակով:

4. Մասնակից պետությունները պարտավորվում են խրախուսել և զարգացնել միջազգային համագործակցությունը, նպատակ ունենալով աստիճանաբար հասնել սույն հոդվածում ճանաչված իրավունքների լիակատար իրականացմանը: Այդ կապակցությամբ հատուկ ուշադրություն պետք է դարձվի զարգացող երկրների կարիքներին:

## **ՀՈՂՎԱԾ 25**

Մասնակից պետություններն ընդունում են երեխայի նկատմամբ հոգ տանելու, նրա պաշտպանության կամ ֆիզիկական կամ հոգեկան հիվանդությունների բուժման նպատակով իրավասու մարմինների կողմից խնամակալության տրված երեխայի իրավունքը՝ պարբերաբար գնահատական տալու իր բուժման ընթացքին և իր

նկատմամբ նման խնամակալության հետ կապված մյուս բոլոր պայմաններին:

## **ՀՈՂՎԱԾ 26**

1. Մասնակից պետություններն ընդունում են սոցիալական ապահովության (ներառյալ սոցիալական ապահովագրությունը) բարիքներից օգտվելու յուրաքանչյուր երեխայի իրավունքը և անհրաժեշտ միջոցներ են ձեռնարկում այդ իրավունքի լիակատար իրականացմանը հասնելու համար՝ համաձայն իրենց ազգային օրենսդրության:

2. Այդ բարիքները տրամադրվում են ըստ անհրաժեշտության, հաշվի առնելով առկա ռեսուրսները և երեխայի ու այն անձանց հնարավորությունները, որոնք պատասխանատվություն են կրում երեխային պահելու համար, ինչպես նաև երեխայի կողմից կամ նրա անունից բարիքներ ստանալու հետ կապված այլ նկատառումներ:

## **ՀՈՂՎԱԾ 27**

1. Մասնակից պետություններն ընդունում են, որ յուրաքանչյուր երեխա իր ֆիզիկական, մտավոր, հոգևոր, բարոյական և սոցիալական զարգացման համար անհրաժեշտ կենսամակարդակի իրավունք ունի:

2. Ծնողը (ները) կամ այն անձինք, որոնք դաստիարակում են երեխային, իրենց ընդունակությունների և ֆինանսական հնարավորությունների շրջանակներում հիմնական պատասխանատվություն են կրում երեխայի զարգացման համար անհրաժեշտ կենսապայմաններ ապահովելու հարցում:

3. Մասնակից պետությունները, ազգային պայմաններին համապատասխան և իրենց հնարավորությունների շրջանակներում, անհրաժեշտ միջոցներ են ձեռնարկում այդ իրավունքների իրականացման գործում ծնողներին և երեխային դաստիարակող այլ անձանց օգնություն ցույց տալու համար և հարկ եղած դեպքում ցուցաբերում են նյութական աջակցություն ու սատարում են հատկապես սննդով, հագուստով և բնակարանով ապահովելու ծրագրերը:

4. Մասնակից պետությունները ձեռնարկում են բոլոր անհրաժեշտ միջոցները ինչպես պետության ներսում, այնպես էլ արտասահմանում՝ ծնողների կամ երեխայի համար ֆինանսական պատասխանատվություն կրող անձանց կողմից երեխայի խնամքի վերահաստատումն ապահովելու համար: Մասնավորապես, եթե երեխան և նրա համար ֆինանսական պատասխանատվություն կրող անձը բնակվում են տարբեր պետություններում, մասնակից պետությունները նպաստում են միջազգային համաձայնագրեր կնքելուն կամ այդպիսի համաձայնագրերին միանալուն, ինչպես նաև համապատասխան այլ պայմանավորվածություններ ձեռք բերելուն:

## **ՀՈՂՎԱԾ 28**

1. Մասնակից պետություններն ընդունում են երեխայի կրթության իրավունքը, և հավասար հնարավորությունների հիման վրա այդ իրավունքի իրականացմանն աստիճանաբար հասնելու համար նրանք, մասնավորապես,

ա) մտցնում են անվճար և պարտադիր տարրական կրթություն,

բ) խրախուսում են միջնակարգ կրթության տարբեր, ինչպես ընդհանուր, այնպես էլ մասնագիտական ձևերի զարգացումը, ապահովում են դրա մատչելիությունը բոլոր երեխաների համար և ձեռնարկում են այնպիսի անհրաժեշտ միջոցներ, ինչպիսիք են անվճար կրթություն մտցնելը և անհրաժեշտության դեպքում ֆինանսական օգնություն ցույց տալը,

գ) բոլոր անհրաժեշտ միջոցների տրամադրմամբ ապահովում են բարձրագույն կրթության մատչելիությունը, ըստ յուրաքանչյուրի ընդունակությունների,

դ) կրթության և մասնագիտական պատրաստության բնագավառում ապահովում են տեղեկատվության և նյութերի մատչելիությունը բոլոր երեխաների համար,

ե) միջոցներ են ձեռնարկում նպաստելու կանոնավոր դպրոց հաճախելուն և դպրոցը թողած սովորողների

թվաքանակի նվազմանը:

2. Մասնակից պետությունները ձեռնարկում են բոլոր անհրաժեշտ միջոցները դպրոցական կարգապահությունը երեխայի մարդկային արժանապատվության նկատմամբ հարգանք արտահայտող մեթոդներով պահպանելու համար և սույն կոնվենցիային համապատասխան:

3. Մասնակից պետությունները խրախուսում և զարգացնում են միջազգային համագործակցությունը կրթությանը վերաբերող հարցերում, մասնավորապես, ամբողջ աշխարհում անգրագիտության վերացմանը և գիտատեխնիկական գիտելիքների և ուսուցման ժամանակակից մեթոդների մատչելիության աստիճանի բարձրացմանը նպաստելու նպատակով: Այդ կապակցությամբ հատուկ ուշադրություն պետք է դարձվի զարգացող երկրների կարիքներին:

## **ՀՈՂՎԱԾ 29**

1. Մասնակից պետությունները համակարծիք են, որ երեխայի կրթությունը պետք է ուղղված լինի.

ա) երեխայի անհատականության, տաղանդի և մտավոր ու ֆիզիկական ունակությունների զարգացմանը՝ դրանց լրիվ ծավալով,

բ) մարդու իրավունքների և հիմնական ազատությունների, ինչպես նաև Միավորված ազգերի կազմակերպության կանոնադրության մեջ հռչակված սկզբունքների նկատմամբ հարգանքի դաստիարակմանը,

գ) երեխայի ծնողների, իր մշակութային ինքնատիպության, լեզվի և արժեքների, իր բնակության երկրի ազգային արժեքների, իր ծագման երկրի և իր սեփական քաղաքակրթությունից տարբեր քաղաքակրթությունների հանդեպ հարգանքի դաստիարակմանը.

դ) ազատ հասարակության մեջ փոխըմբռնման, խաղաղության, հանդուրժողականության, տղամարդու և կնոջ իրավահավասարության և բոլոր ժողովուրդների, էթնիկական, ազգային և կրոնական խմբերի, ինչպես նաև բնիկ ազգաբնակչությանը պատկանող անձանց միջև բարեկամության ոգով գիտակցական կյանք վարելու համար երեխայի նախապատրաստմանը,

ե) շրջապատող բնության նկատմամբ հարգանքի դաստիարակմանը:

2. Սույն հոդվածի կամ 28-րդ հոդվածի որևէ մասը չի կարող մեկնաբանվել որպես առանձին անձանց և մարմինների իրավունքների սահմանափակում՝ ստեղծելու և ղեկավարելու ուսումնական հաստատություններ սույն հոդվածի 1-ին կետում շարադրված սկզբունքները մշտապես պահպանելու և այդպիսի ուսումնական հաստատություններում տարվող կրթությունն այն նվազագույն նորմերին համապատասխանեցնելու պահանջները կատարելու պայմանով, որոնք կարող են սահմանվել պետության կողմից:

## **ՀՈՂՎԱԾ 30**

Այն պետություններում, ուր գոյություն ունեն էթնիկական, կրոնական կամ լեզվական փոքրամասնություններ կան բնիկ ազգաբնակչության թվին պատկանող անձինք, այդպիսի փոքրամասնություններին կամ բնիկ ազգաբնակչությանը պատկանող երեխային չի կարող մերժվել իր խմբի մյուս անդամների հետ իր մշակութային օգտվելու, իր կրոնը դավանելու և նրա ծեսերը կատարելու, ինչպես նաև մայրենի լեզուն գործածելու իրավունքը:

## **ՀՈՂՎԱԾ 31**

1. Մասնակից պետությունները ընդունում են հանգստի և ժամանցի, իր տարիքին համապատասխան խաղերին և զվարճալի միջոցառումներին, ինչպես նաև մշակութային կյանքին ազատորեն մասնակցելու և արվեստով զբաղվելու երեխայի իրավունքը:

2. Մասնակից պետությունները հարգում և խրախուսում են մշակութային և ստեղծագործական կյանքին բազմակողմանիորեն մասնակցելու երեխայի իրավունքը և նպաստում են մշակութային ու ստեղծագործական գործունեության, հանգստի և ժամանցի համար համապատասխան հավասար հնարավորությունների

տրամադրմանը:

### **ՀՈՂՎԱԾ 32**

1. Մասնակից պետություններն ընդունում են տնտեսական շահագործումից և այնպիսի աշխատանք կատարելուց պաշտպանվածության երեխայի իրավունքը, որը կարող է վտանգավոր լինել նրա առողջության համար կամ խոչընդոտել կրթություն ստանալուն, կամ վնասել նրա առողջությանը և ֆիզիկական, մտավոր, բարոյական ու սոցիալական զարգացմանը:

2. Մասնակից պետությունները ձեռնարկում են օրենսդրական, վարչական և սոցիալական միջոցառումներ, ինչպես նաև միջոցներ են ձեռք առնում կրթության բնագավառում սույն հոդվածի իրականացման համար: Այդ նպատակով, ղեկավարվելով, այլ միջազգային փաստաթղթերի համապատասխան դրույթներով, մասնակից պետությունները, մասնավորապես,

- ա) սահմանում են աշխատանքի ընդունման նվազագույն տարիք կամ նվազագույն տարիքներ,
- բ) որոշում են աշխատանքային օրվա տևողությունը և աշխատանքի պայմանների առթիվ ներկայացվող պահանջները,
- գ) սույն հոդվածի արդյունավետ իրականացումն ապահովելու համար նախատեսում են պատժի համապատասխան ձևեր կամ այլ սանկցիաներ:

### **Հոդված 33**

Մասնակից պետությունները ձեռնարկում են անհրաժեշտ բոլոր միջոցները, ներառյալ օրենսդրական, վարչական, սոցիալական միջոցները, այդ թվում՝ կրթության բնագավառում, որպեսզի երեխաներին պաշտպանեն պսիխոտրոպ միջոցների և թմրանյութերի ապօրինի օգտագործումից, ինչպես դրանք բնութագրված են միջազգային փաստաթղթերում, և թույլ չտան երեխաներին օգտագործել այդպիսի նյութերի հակաօրինական արտադրության ու վաճառքի ասպարեզում:

### **Հոդված 34**

Մասնակից պետությունները պարտավորվում են երեխային պաշտպանել սեռական շահագործման բոլոր ձևերից և սեռական այլասերումից: Այդ նպատակով մասնակից պետությունները, մասնավորապես, ազգային, երկկողմ և բազմակողմանի մակարդակներով ձեռնարկում են բոլոր անհրաժեշտ միջոցները, որպեսզի կանխարգելեն

- ա) երեխային ցանկացած ապօրինի սեռական գործունեության դրդելը կամ հարկադրելը,
- բ) շահագործման նպատակով երեխաներին պոռնոկոլոնիայի մեջ կամ այլ ապօրինի սեռական պրակտիկայում օգտագործելը,
- գ) շահագործման նպատակով երեխաներին պոռնոգրաֆիայի և պոռնոգրաֆիկ նյութերի մեջ օգտագործելը:

### **Հոդված 35**

Մասնակից պետություններն ազգային, երկկողմ և բազմակողմ մակարդակներով ձեռնարկում են բոլոր անհրաժեշտ միջոցները երեխաների հափշտակությունները, նրանց առուվաճառքը կամ ցանկացած նպատակով և ցանկացած ձևով նրանց մաքսանենգության առարկա դարձնելը կանխելու համար:

### **Հոդված 36**

Մասնակից պետությունները երեխային պաշտպանում են նրա բարեկեցության որևէ կողմին վնասող

շահագործման բոլոր այլ ձևերից:

### **Հոդված 37**

Մասնակից պետություններն ապահովում են, որ

ա) ոչ մի երեխա չենթարկվի խոշտանգումների կամ այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը վիրավորող վերաբերմունքի կամ պատժի: Ոչ մահապատիժ, ոչ ցմահ բանտարկություն, որն ազատման հնարավորություն չի նախատեսում, չի սահմանվում 18 տարին չլրացած անձանց կողմից կատարված հանցագործությունների համար,

բ) ոչ մի երեխա չզրկվի ազատությունից անօրինական կամ կամայական կերպով: Երեխայի ձերբակալությունը, կալանքը կամ բանտարկությունը իրականացվում են համաձայն օրենքի և գործադրվում միայն որպես ծայրահեղ միջոց՝ որքան հնարավոր է կարճ ժամանակամիջոցում,

գ) ազատությունից զրկված յուրաքանչյուր երեխա օգտվի մարդասիրական վերաբերմունքից և իր անձի անկապտելի արժանապատվության նկատմամբ հարգանքից, հաշվի առնելով նրա տարիքի անձանց պահանջմունքները: Մասնավորապես, ազատությունից զրկված յուրաքանչյուր երեխա պետք է առանձնացվի մեծահասակներից, եթե միայն չի համարվում, որ, երեխայի լավագույն շահերից ելնելով, հարկավոր չէ այդ անել, և պետք է իրավունք ունենա կապ պահպանել իր ընտանիքի հետ՝ նամակագրության և տեսակցությունների միջոցով, բացառությամբ հատուկ հանգամանքների,

դ) ազատությունից զրկված յուրաքանչյուր երեխա իրավունք ունենա անհապաղ օգտվելու համապատասխան իրավական և այլ օգնությունից, ինչպես նաև դատարանի կամ իրավասու, անկախ և անկողմնակալ այլ մարմնի առաջ վիճարկել իրեն ազատությունից զրկելու օրինականությունը և իրավունք ունենա նրանց կողմից անհապաղ որոշում ակնկալել այդպիսի ցանկացած դատավարական գործողության առթիվ:

### **Հոդված 38**

1. Մասնակից պետությունները պարտավորվում են հարգել միջազգային մարդասիրական իրավունքի կանոնները, որոնք կիրառվում են զինված հակամարտության դեպքում և առնչվում են երեխաներին, և ապահովել դրանց պահպանումը:

2. Մասնակից պետությունները ձեռնարկում են հնարավոր բոլոր միջոցները՝ ապահովելու, որպեսզի 15 տարին չլրացած անձինք ուղղակի մասնակցություն չունենան մարտական գործողություններին:

3. Մասնակից պետությունները ձեռնպահ են մնում 15 տարին չլրացած ցանկացած անձի՝ իրենց զինված ուժերում ծառայության կանչելուց: Հավաքագրման ժամանակ 15 տարին լրացած, բայց դեռ 18 տարին չլրացած անձանց թվից մասնակից պետությունները ձգտում են նախապատվություն տալ ավելի բարձր տարիք ունեցողներին:

4. Զինված հակամարտությունների ժամանակ քաղաքացիական ազգաբնակչության պաշտպանության առթիվ միջազգային մարդասիրական իրավունքով իրենց ստանձնած պարտավորությունների համաձայն, մասնակից պետությունները պարտավորվում են ձեռնարկել հնարավոր բոլոր միջոցները զինված հակամարտությունից տուժող երեխաների պաշտպանությունը և խնամքն ապահովելու նպատակով:

### **Հոդված 39**

Մասնակից պետությունները ձեռնարկում են անհրաժեշտ բոլոր միջոցները, որպեսզի աջակցություն ցույց տան քամահրանքի ցանկացած ձևի, շահագործման կամ չարաշահման, խոշտանգումների կամ ցանկացած այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը վիրավորող վերաբերմունքի, պատժի կամ զինված հակամարտության զոհ դարձած երեխայի ֆիզիկական կամ հոգեբանական վերականգնմանը և սոցիալական վերամիասնացմանը: Այդպիսի վերականգնումը և վերամիասնացումը պետք է իրականացվեն երեխայի առողջությունը, իր նկատմամբ

հարգանքը և արժանապատվությունն ապահովող պայմաններում:

#### **Հոդված 40**

1. Մասնակից պետություններն ընդունում են քրեական օրենսդրությունը խախտած համարվող, մեղադրվող կամ մեղավոր ճանաչված յուրաքանչյուր երեխայի իրավունքը՝ արժանանալու այնպիսի վերաբերմունքի, որը նպաստում է նրա արժանապատվության և նշանակալիության զգացումի զարգացմանը, երեխայի մեջ ամրապնդում է հարգանքը մարդու իրավունքների և ուրիշների հիմնական ազատությունների նկատմամբ, և որի դեպքում հաշվի է առնվում երեխայի տարիքը և հասարակության մեջ նրա վերամիասնացման և հետագա դրական դեր խաղալուն նպաստելու ցանկալիությունը:

2. Այդ նպատակով և նկատի առնելով համապատասխան միջազգային փաստաթղթերի դրույթները, մասնակից պետությունները, մասնավորապես, ապահովում են, որ.

ա) ոչ մի երեխա չհամարվի քրեական օրենսդրությունը խախտող, չմեղադրվի և մեղավոր չճանաչվի այն խախտելու մեջ իր գործողությունների կամ անգործության պատճառով, եթե դրանք կատարման պահին արգելված չեն եղել ազգային կամ միջազգային իրավունքով,

բ) քրեական օրենսդրությունը խախտած համարվող կամ մեղադրվող յուրաքանչյուր երեխա ունենա առնվազն հետևյալ երաշխիքները.

- անմեղության կանխավարկած, քանի դեռ նրա մեղքը չի ապացուցվել համաձայն օրենքի,

- անհապաղ և անմիջական տեղեկատվություն իր դեմ հարուցված մեղադրանքի մասին, անհրաժեշտության դեպքում՝ նաև ծնողների կամ օրինական խնամակալների միջոցով, իրավական և հարկ եղած այլ օգնություն՝ իր պաշտպանությունը նախապատրաստելիս և իրականացնելիս,

- արդարացի քննության ընթացքում քննարկվող հարցի առթիվ որոշման անհետաձգելի ընդունում իրավասու, անկախ և անկողմնակալ մարմնի կամ դատարանի կողմից՝ օրենքի համաձայն փաստաբանի կամ համապատասխան այլ անձի ներկայությամբ, և, եթե դա չի հակասում երեխայի լավագույն շահերին, մասնավորապես, հաշվի առնելով նրա տարիքը կամ ծնողների կամ օրինական խնամակալների դրությունը,

- որպես վկա ցուցմունք տալու կամ մեղքը խոստովանելու հարկադրանքից ազատ լինելը, ինքնուրույն կամ այլ անձանց օգնությամբ մեղադրող կողմի վկաների ցուցմունքների ուսումնասիրումը, պաշտպանող կողմի վկաների հավասար մասնակցության ապահովումը և նրանց ցուցմունքների ուսումնասիրումը,

- եթե համարվի, որ երեխան խախտել է քրեական օրենսդրությունը՝ կրկնակի քննություն վերադաս իրավասու, անկախ և անկողմնակալ մարմնի կամ դատարանի կողմից, համաձայն օրենքի համապատասխան որոշման և այդ առթիվ ձեռնարկված ցանկացած այլ միջոցների,

- թարգմանչի անվճար օգնություն, եթե երեխան չի հասկանում գործածվող լեզուն կամ չի խոսում այդ լեզվով,

- լիակատար հարգանք նրա անձնական կյանքի նկատմամբ հետաքննության բոլոր փուլերում:

3. Մասնակից պետությունները ձգտում են նպաստել քրեական օրենսդրությունը խախտած համարվող, մեղադրվող կամ մեղավոր ճանաչված երեխաներին անմիջականորեն վերաբերող օրենքների, ընթացակարգերի, մարմինների և հիմնարկների սահմանմանը, մասնավորապես,

ա) այն նվազագույն տարիքի սահմանմանը, որից ցածր երեխաները համարվում են անընդունակ խախտելու քրեական օրենսդրությունը,

բ) անհրաժեշտության և ցանկալիության դեպքում այդպիսի երեխաների հետ առանց դատաքննության վարվելու նպատակով միջոցներ ձեռնարկելուն՝ մարդու իրավունքների լիակատար պաշտպանության և իրավական երաշխիքների պահպանման պայմանով:

4. Անհրաժեշտ է այնպիսի բազմազան միջոցառումների առկայությունը, ինչպիսիք են խնամքը, խնամակալության և հսկողության մասին կանոնակարգը, խորհրդատվական ծառայությունները, փորձաշրջանի նշանակումը, դաստիարակությունը, ուսուցման և մասնագիտական պատրաստության ծրագրերը և խնամքի այլ ձևեր, որոնք փոխարինում են հիմնարկներում ցուցաբերվող հոգածությանը, նպատակ ունենալով երեխայի նկատմամբ ապահովել նրա բարեկեցությունը, ինչպես նաև նրա դրությանն ու հանցագործության բնույթի

համապատասխանող վերաբերմունք:

#### **Հոդված 41**

Սույն կոնվենցիայում ոչինչ չի կարող վնասել որևէ դրույթի, որն առավել մեծ չափով է նպաստում երեխայի իրավունքների իրագործմանը և պարունակվում է.

ա) մասնակից պետության օրենքում կամ

բ) տվյալ պետության վերաբերմամբ գործող միջազգային իրավունքի այլ նորմերում:

### **Մ ա ս II.**

#### **Հոդված 42**

Մասնակից պետությունները պարտավորվում են պատշաճ և գործուն միջոցների գործադրմամբ կոնվենցիայի սկզբունքների և դրույթների մասին լայնորեն տեղեկացնել ինչպես մեծահասակներին, այնպես էլ երեխաներին:

#### **Հոդված 43**

1. Սույն կոնվենցիայի համաձայն, մասնակից պետությունների ստանձնած պարտավորությունների կատարման գործում ձեռք բերած առաջընթացը քննարկելու նպատակով հիմնվում է Երեխայի իրավունքների կոմիտե, որը կատարում է ստորև նախատեսվող ֆունկցիաները:

2. Կոմիտեն բաղկացած է բարոյական բարձր հատկանիշներ ունեցող և սույն կոնվենցիայի ընդգրկած բնագավառում իրենց իրավասությամբ ճանաչման արժանացած տասը փորձագետներից: Կոմիտեի անդամներն ընտրվում են մասնակից պետությունների կողմից իրենց քաղաքացիների թվից և հանդես են գալիս անհատական կարգով, ընդ որում, ուշադրություն է դարձվում աշխարհագրական բաժանման արդարացիությանը, ինչպես նաև իրավական գլխավոր համակարգերին:

3. Կոմիտեի անդամներն ընտրվում են գաղտնի քվեարկությամբ, ցուցակի մեջ մտած այն անձանց թվից, որոնց առաջադրել են մասնակից պետությունները: Յուրաքանչյուր մասնակից պետություն կարող է առաջադրել մեկ անձ իր քաղաքացիների թվից:

4. Կոմիտեի կազմի առաջին ընտրությունները կատարվում են ոչ ուշ, քան սույն կոնվենցիան ուժի մեջ մտնելուց հետո 6 ամսվա ընթացքում, իսկ հետագայում՝ երկու տարին մեկ: Համենայնդեպս, յուրաքանչյուր ընտրության օրվանից չորս ամիս առաջ Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարը նամակով դիմում է մասնակից պետություններին՝ առաջարկելով երկու ամսվա ընթացքում ներկայացնել իրենց թեկնածուներին: Այնուհետև գլխավոր քարտուղարն այբբենական կարգով կազմում է նման ձևով առաջադրված անձանց ցուցակը, նշելով առաջադրվող մասնակից պետությունները, և այդ ցուցակը ներկայացնում սույն կոնվենցիայի մասնակից պետություններին:

5. Ընտրությունները տեղի են ունենում մասնակից պետությունների խորհրդակցություններում, որոնք հրավիրում է գլխավոր քարտուղարը Միավորված ազգերի կազմակերպության կենտրոնական հիմնարկներում: Այդ խորհրդակցություններում, ուր մասնակից պետությունների երկու երրորդը քվորում է կազմում, կոմիտեի անդամ ընտրված են համարվում այն թեկնածուները, ովքեր ստացել են ամենաշատ ձայները և ներկա գտնված ու քվեարկությանը մասնակցած պետությունների ներկայացուցիչների ձայների բացարձակ մեծամասնությունը:

6. Կոմիտեի անդամներն ընտրվում են չորս տարի ժամանակով: Իրենց թեկնածության կրկնակի առաջադրման դեպքում նրանք ունեն վերընտրվելու իրավունք: Առաջին ընտրությունների ժամանակ ընտրված հինգ անդամների լիազորությունների ժամկետը լրանում է երկրորդ տարվա վերջում. այդ հինգ անդամների անունները որոշվում են խորհրդակցության նախագահի կողմից՝ առաջին ընտրություններից անմիջապես հետո անցկացվող վիճակահանությանը:



7. Կոմիտեի որևէ անդամի մահվան կամ պաշտոնաթողության դեպքում, կամ եթե նա որևէ պատճառով այլևս չի կարող կատարել կոմիտեի անդամի պարտականությունները, կոմիտեի անդամին առաջադրված մասնակից պետությունը իր քաղաքացիների թվից մնացած ժամանակի համար կոմիտեի հավանությամբ նշանակում է այլ փոքրձագետ:

8. Կոմիտեն սահմանում է ընթացակարգի իր կանոնները:

9. Կոմիտեն ընտրում է իր պաշտոնատար անձանց՝ երկու տարի ժամանակով:

10. Կոմիտեի նստաշրջաններն, իբրև կանոն, անց են կացվում Միավորված ազգերի կազմակերպության կենտրոնական հիմնարկներում կամ կոմիտեի որոշած ցանկացած այլ հարմար վայրում: Կոմիտեի նստաշրջաններն, իբրև կանոն, անց են կացվում ամեն տարի: Կոմիտեի նստաշրջանների տևողությունը որոշվում է անհրաժեշտության դեպքում վերանայվում է սույն կոնվենցիայի մասնակից պետությունների խորհրդակցությունում՝ Գլխավոր ասամբլեայի հավանությամբ:

11. Սույն կոնվենցիայի համաձայն, իր ֆունկցիաներն արդյունավետ կատարելու համար Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարը կոմիտեին տրամադրում է անհրաժեշտ աշխատակազմ և նյութական միջոցներ:

12. Սույն կոնվենցիայի համաձայն հիմնված կոմիտեի անդամները Գլխավոր ասամբլեայի հաստատմամբ Միավորված ազգերի կազմակերպության միջոցներից ստանում են պարգևավճար՝ Գլխավոր ասամբլեայի սահմանած կարգով և պայմաններով:

#### **Հոդված 44**

1. Մասնակից պետությունները պարտավորվում են Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարի միջոցով կոմիտեին ներկայացնել զեկուցագրեր սույն կոնվենցիայում ամրագրված իրավունքների կատարման ուղղությամբ իրենց ձեռնարկած միջոցառումների և այդ իրավունքների իրականացման գործում ձեռք բերած առաջընթացի մասին:

ա) համապատասխան մասնակից պետության համար սույն կոնվենցիան ուժի մեջ մտնելուց հետո երկու տարվա ընթացքում,

բ) այնուհետև՝ յուրաքանչյուր հինգ տարին մեկ:

2. Սույն հոդվածի համաձայն, ներկայացվող զեկուցագրերում նշում են այն գործոններն ու դժվարությունները, եթե այդպիսիք կան, որոնք ազդում են սույն կոնվենցիայով ստանձնած պարտավորությունների կատարման մակարդակի վրա: Չեկուցագրերը պարունակում են նաև բավականաչափ տեղեկատվություն, որպեսզի կոմիտեն լրիվ պատկերացում ունենա տվյալ երկրում կոնվենցիայի գործադրման մասին:

3. Հարկ չկա, որ կոմիտեին առաջին բազմակողմանի զեկուցագիրը ներկայացրած մասնակից պետությունը իր հետագա զեկուցագրերում, որոնք պետք է ներկայացվեն սույն հոդվածի 1բ) կետի համաձայն, կրկնի ավելի վաղ շարադրած հիմնական տեղեկությունները:

4. Կոմիտեն մասնակից պետություններից կարող է պահանջել սույն կոնվենցիայի իրականացմանը վերաբերող լրացուցիչ տեղեկատվություն:

5. Կոմիտեի գործունեության մասին զեկուցագրերը Տնտեսական և սոցիալական խորհրդի միջոցով երկու տարին մեկ ներկայացվում են Գլխավոր ասամբլեային:

6. Մասնակից պետությունները սեփական երկրներում ապահովում են իրենց զեկուցագրերի լայն հրապարակայնությունը:

#### **Հոդված 45**

Սույն կոնվենցիայի իրականացման արդյունավետությանը նպաստելու և նրա ընդգրկված բնագավառներում միջազգային համագործակցությունը խրախուսելու նպատակով.

ա) Միավորված ազգերի կազմակերպության մասնագիտացված հիմնարկները, Մանկական ֆոնդը և

Միավորված ազգերի կազմակերպության այլ մարմիններ իրավունք ունեն ներկայացված լինել սույն կոնվենցիայի այն դրույթների իրականացման վերաբերյալ հարցերի քննարկման ժամանակ, որոնք մտնում են նրանց լիազորությունների ոլորտի մեջ: Կոմիտեն կարող է առաջարկել Միավորված ազգերի կազմակերպության մասնագիտացված հիմնարկներին, Մանկական ֆոնդին և այլ իրավասու մարմինների, երբ ինքը դա նպատակահարմար կհամարի, ներկայացնել փորձագետների եզրակացություն կոնվենցիայի իրականացման այն բնագավառների վերաբերյալ, որոնք մտնում են նրանց համապատասխան լիազորությունների ոլորտի մեջ: Կոմիտեն կարող է առաջարկել Միավորված ազգերի կազմակերպության մասնագիտացված հիմնարկներին, Մանկական ֆոնդին և Միավորված ազգերի կազմակերպության այլ մարմինների՝ ներկայացնել զեկուցագրեր սույն կոնվենցիայի իրականացման այն բնագավառների մասին, որոնք մտնում են նրանց լիազորությունների ոլորտի մեջ:

բ) Կոմիտեն, երբ ինքը դա նպատակահարմար է համարում, Միավորված ազգերի կազմակերպության մասնագիտացված հիմնարկություններ, Մանկական ֆոնդ և այլ իրավասու մարմիններ է վերահասցեագրում մասնակից պետությունների ցանկացած զեկուցագիր, որում տեխնիկական խորհրդատվության կամ օգնության խնդրանք է պարունակվում կամ նշվում է այդպիսի կարիքի մասին, ինչպես նաև կոմիտեի դիտողություններն ու առաջարկությունները, եթե այդպիսիք կան, տվյալ խնդրանքի վերաբերյալ:

գ) Կոմիտեն կարող է երաշխավորել Գլխավոր ասամբլեային՝ Գլխավոր քարտուղարին առաջարկելու իր անունից հետազոտություններ կատարել երեխայի իրավունքներին վերաբերող առանձին հարցերով:

դ) Կոմիտեն կարող է մտցնել ընդհանուր բնույթի առաջարկություններ և երաշխավորություններ, հիմնված այն տեղեկատվության վրա, որը կստացվի սույն կոնվենցիայի 44 և 45 հոդվածներին համապատասխան: Ընդհանուր բնույթի այդօրինակ առաջարկությունները և երաշխավորությունները վերահասցեագրվում են ցանկացած շահագրգիռ մասնակից պետության և հայտնվում են Գլխավոր ասամբլեային՝ մասնակից պետության դիտողությունների հետ միասին, եթե այդպիսիք կան:

### Մ ա ս III.

#### **Հոդված 46**

Սույն կոնվենցիան բաց է բոլոր պետությունների ստորագրման համար:

#### **Հոդված 47**

Սույն կոնվենցիան ենթակա է վավերացման: Վավերացման փաստաթղթերը տրվում են ի պահ Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին:

#### **Հոդված 48**

Սույն կոնվենցիան բաց է ցանկացած պետության միանալու համար: Միանալու մասին փաստաթղթերը ի պահ են տրվում Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին:

#### **Հոդված 49**

1. Սույն կոնվենցիան ուժի մեջ է մտնում Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին նրա վավերացման կամ նրան միանալու մասին 20-րդ փաստաթուղթը ի պահ հանձնելուց 30 օր հետո:

2. Յուրաքանչյուր պետության համար, որը սույն կոնվենցիան վավերացնում կամ նրան է միանում վավերացման կամ միանալու մասին 20-րդ փաստաթուղթը ի պահ հանձնելուց հետո, սույն կոնվենցիան ուժի մեջ է մտնում այդ պետության կողմից նրա վավերացման կամ նրան միանալու վերաբերյալ փաստաթուղթը ի պահ

հանձնելու 30-րդ օրը:

### **Հոդված 50**

1. Ցանկացած մասնակից պետություն կարող է առաջարկել ուղղում և այն ներկայացնել Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին: Գլխավոր քարտուղարն այնուհետև առաջարկված ուղղումը ուղարկում է մասնակից պետություններին, խնդրելով նշել՝ արտահայտվում են, արդյոք, մասնակից պետությունների կոնֆերանս հրավիրելու օգտին՝ այդ առաջարկությունը քննարկելու և այդ առթիվ քվեարկություն անցկացնելու նպատակով: Եթե չորս ամսվա ընթացքում, սկսած այդ հաղորդման օրվանից, մասնակից պետությունների առնվազն մեկ երրորդն արտահայտվում է հօգուտ նման կոնֆերանսի, Գլխավոր քարտուղարը Միավորված ազգերի կազմակերպության հովանու ներքո հրավիրում է այդ կոնֆերանսը: Կոնֆերանսին ներկա գտնված և քվեարկությանը մասնակցած պետությունների մեծամասնության ընդունած ցանկացած ուղղում ներկայացվում է Գլխավոր ասամբլեայի հաստատմանը:

2. Սույն հոդվածի 1-ին կետի համաձայն, կատարված ուղղումը, ուժի մեջ է մտնում Միավորված ազգերի կազմակերպության կողմից հաստատվելու և մասնակից պետությունների երկու երրորդի կողմից ընդունվելու դեպքում:

3. Ուժի մեջ մտնելուց հետո ուղղումը պարտադիր է դառնում այն մասնակից պետությունների համար, որոնք դա ընդունել են, իսկ մյուս մասնակից պետությունների համար պարտադիր են մնում սույն կոնվենցիայի դրույթները և նախորդ այն բոլոր ուղղումները, որ իրենք ընդունել են:

### **Հոդված 51**

1. Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարը ստանում և բոլոր պետություններին է ուղարկում վավերացման կամ միանալու ժամանակ պետությունների արած վերապահումների տեքստը:

2. Սույն կոնվենցիայի նպատակներին ու խնդիրներին անհամատեղելի վերապահումներ չեն թույլատրվում:

3. Վերապահումները կարող են հանվել ցանկացած ժամանակ, Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին ուղղված ծանուցագրի միջոցով, որն այնուհետև այդ մասին հայտնում է բոլոր պետություններին: Այդպիսի ծանուցագիրը ուժի մեջ է մտնում քարտուղարի կողմից այն ստանալու օրը:

### **Հոդված 52**

Ցանկացած մասնակից պետություն կարող է չեղարկել սույն կոնվենցիան՝ Միավորված ազգերի կազմակերպության գլխավոր քարտուղարին գրավոր տեղյակ պահելու միջոցով: Չեղարկումն ուժի մեջ է մտնում Գլխավոր քարտուղարի կողմից այդ մասին ծանուցագրի ստանալուց մեկ տարի անց:

### **Հոդված 53**

Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարը նշանակվում է սույն կոնվենցիայի ավանդապահ:

### **Հոդված 54**

Սույն կոնվենցիայի բնագիրը, որի անգլերեն, արաբերեն, իսպաներեն, չինարեն, ռուսերեն և ֆրանսերեն տեքստերը հավասարաթեք են, ի պահ է տրվում Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին:

Ի հավաստումն որի, ներքոստորագրյալ լիազոր ներկայացուցիչները, իրենց կառավարությունների կողմից պատշաճ և համապատասխան կերպով լիազորված լինելով, ստորագրեցին սույն կոնվենցիան:

1. Տես Տնտեսական և սոցիալական խորհրդի պաշտոնական հաշվետվությունները, 1989 թվական, հավելված թիվ 2 (E/1989/20), գլուխ II, բաժին Ա
2. Բանաձև 1386 (XIV)
3. Բանաձև 217 Ա (III)
4. Տես բանաձև 2200 Փ (XXI)
5. Տես League of Nations Official Journal, Special Supplement 21, October 1924, p. 43
6. Բանաձև 1386 (XIV), նախաբանի երրորդ կետը
7. Բանաձև 41/85
8. Բանաձև 40/33
9. Բանաձև 3318 (XXIX)

## Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Սույն Արձանագրության անդամ պետությունները,

համարելով, որ Երեխայի իրավունքների մասին Կոնվենցիայի նպատակներին հասնելուն աջակցելու և նրա դրույթները, հատկապես 1-ին, 11-րդ, 21-րդ, 32-րդ, 33-րդ, 34-րդ, 35-րդ և 36-րդ հոդվածները կենսագործելու համար նպատակահարմար է առավել լայն բնույթ տալ այն միջոցներին, որոնք անդամ պետությունները պետք է ձեռնարկեն մանկավաճառության, երեխաների մարմնավաճառության և մանկական պոռնոգրաֆիայի պրակտիկայից պաշտպանելու երաշխիքների ապահովման նպատակներով,

համարելով նաև, որ Երեխայի իրավունքների մասին Կոնվենցիայում ճանաչվում է երեխայի իրավունքը տնտեսական շահագործումից և ցանկացած աշխատանք կատարելուց պաշտպանելու նկատմամբ, որը կարող է վտանգ ներկայացնել նրա առողջությանը կամ խոչընդոտ դառնալ նրա կրթություն ստանալուն կամ վնաս հասցնել նրա առողջությանը և ֆիզիկական, մտավոր և հոգևոր, բարոյական և սոցիալական զարգացմանը,

խիստ մտահոգված լինելով մանկավաճառության, երեխաների մարմնավաճառության և մանկական պոռնոգրաֆիայի նպատակներով երեխաների միջազգային մաքսանենգ փոխադրման նշանակալի և աճող ծավալներով,

խորապես մտահոգված լինելով մանավանդ երեխաների համար վտանգավոր, լայնորեն տարածված և շարունակվող սեռազբոսաշրջության պրակտիկայից, քանի որ այն անմիջականորեն խթանում է մանկավաճառությունը, երեխաների մարմնավաճառությունը և մանկական պոռնոգրաֆիան,

ընդունելով, որ մի շարք առանձնապես խոցելի երեխաների խմբերը, ներառյալ փոքրահասակ աղջիկները, առավել շատ են ենթարկվում սեռական շահագործման ռիսկի, և որ սեռականորեն շահագործվող երեխաների մեջ փոքրահասակ աղջիկների մասնաբաժինը անհամեմատ բարձր է համարվում,

մտահոգված լինելով ինտերնետում և այլ զարգացող տեխնոլոգիաների շրջանակներում մանկական պոռնոգրաֆիայի աճող մատչելիությամբ և վկայակոչելով Ինտերնետում մանկական պոռնոգրաֆիայի դեմ պայքարի Միջազգային համաժողովը Վիեննա, 1999 թ. և, մասնավորապես, նրա այն որոշումը, որը կոչ է անում ամբողջ աշխարհում քրեականացնել մանկական պոռնոգրաֆիա և նրա գովազդ արտադրելը, տարածելը, արտահանելը, փոխանցելը, ներմուծելը, դիտավորությամբ պահպանելը և ընդգծում է կառավարությունների և ինտերնետի ինդուստրիայի միջև ավելի սերտ համագործակցության և գործընկերության կարևոր նշանակությունը,

համարելով, որ մանկավաճառության, երեխաների մարմնավաճառության և մանկական պոռնոգրաֆիայի վերացմանը կաջակցի համընդգրկուն մոտեցման ընդունումը, որը հաշվի է առնում այդ երևույթներին նպաստող բոլոր գործոնները, ներառյալ անբավարար զարգացումը, չքավորությունը, տնտեսական անհամաչափությունները, ոչ իրավահավասար սոցիալ-տնտեսական կառուցվածքը, ոչ բարեկեցիկ ընտանիքների առկայությունը, կրթության ցածր մակարդակը, քաղաքների և գյուղական վայրերի միջև տեղաշարժը, սեռային հատկանիշով խտրականությունը, մեծերի անպատասխանատու սեռական վարքը, ավանդությանի պրակտիկայի վնասակար տեսակները, զինված բախումները և երեխաների մաքսանենգ փոխադրումը,

համարելով, որ մանկավաճառության, երեխաների մարմնավաճառության և մանկական պոռնոգրաֆիայի սպառողական պահանջարկի կրճատման համար անհրաժեշտ է ջանքեր գործադրել հասարակության տեղեկատվականացման մակարդակը բարձրացնելու համար, և համոզված լինելով նաև բոլոր մասնակիցների միջև գլոբալ գործընկերային հարաբերությունների ամրապնդման կարևոր նշանակության, ինչպես նաև ազգային մակարդակով իրավակիրառական միջոցների ուժեղացման մեջ,

ուշադրության տակ առնելով երեխաների պաշտպանության բնագավառում միջազգային իրավական ակտերի դրույթները, ներառյալ Երեխաների պաշտպանության և միջպետական որդեգրման բնագավառում

համագործակցության մասին Հաագայի Կոնվենցիան, Երեխաների միջազգային առևանգման քաղաքացիաիրավական տեսակետների մասին Հաագայի Կոնվենցիան, Ծնողական պատասխանատվության և երեխաների պաշտպանության միջոցների հարցերով իրավասության, կիրառվող իրավունքի, ճանաչման, իրավակիրառման և համագործակցության մասին Հաագայի Կոնվենցիան և Մանկական աշխատանքի վատթարագույն ձևերի և արգելման ու արմատախիլ անելու ուղղությամբ անհետաձգելի միջոցառումների մասին Աշխատանքի միջազգային կազմակերպության թիվ 182 Կոնվենցիան,

ոգեշնչված լինելով Երեխայի իրավունքների մասին Կոնվենցիայի համընդհանուր աջակցությամբ, որը վկայում է երեխայի իրավունքների խրախուսման և պաշտպանության գործին ընդհանուր նվիրվածության մասին,

ընդունելով Մանկավաճառության, երեխաների մարմնավաճառության և մանկական պոռնոգրաֆիայի կանխման գործողությունների Ծրագրի և 1996 թ. օգոստոսի 27-31-ը տեղի ունեցած առևտրային նպատակներով երեխաների սեռական շահագործման դեմ Համաշխարհային կոնգրեսի կողմից ընդունված Հռչակագրի և Գործողությունների պլանի, ինչպես նաև այդ հարցով համապատասխան միջազգային մարմինների այլ որոշումների և հանձնարարականների դրույթների իրականացման կարևոր նշանակությունը,

պատշաճորեն հաշվի առնելով երեխայի պաշտպանության և ներդաշնակ զարգացման համար յուրաքանչյուր ժողովրդի ավանդույթների և մշակութային արժեքների կարևոր նշանակությունը,

համաձայնեցին հետևյալի մասին.

## **Հոդված 1**

Անդամ պետությունները արգելում են մանկավաճառությունը, երեխաների մարմնավաճառությունը և մանկական պոռնոգրաֆիան, ինչպես դա նախատեսված է սույն Արձանագրությամբ:

## **Հոդված 2**

Սույն Արձանագրության նպատակների համար՝

ա) մանկավաճառություն նշանակում է՝ ցանկացած գործողություն կամ գործարք, որի միջոցով երեխան ցանկացած անձի կամ անձանց խմբի կողմից փոխանցվում է այլ անձի կամ անձանց խմբի՝ վարձատրության կամ ցանկացած այլ հատուցման դիմաց,

բ) երեխաների մարմնավաճառություն նշանակում է՝ երեխայի օգտագործումը սեռական բնույթի գործունեության մեջ՝ վարձատրության կամ ցանկացած այլ տեսակի հատուցման դիմաց,

գ) մանկական պոռնոգրաֆիա նշանակում է՝ որևէ միջոցով երեխայի ցանկացած ցուցադրում, որը կատարում է իրական կամ մոդելավորված բացահայտ սեռական գործողություններ, կամ երեխաների սեռական օրգանների ցանկացած ցուցադրում գլխավորապես սեռական նպատակներով:

## **Հոդված 3**

1. Յուրաքանչյուր մասնակից պետություն ապահովում է, որ, իբրև նվազագույն, հետևյալ արարքները և գործունեության տեսակները լրիվ չափով ընդգրկված լինեն իր քրեական իրավունքով՝ անկախ նրանից՝ այդ հանցագործությունները կատարվել են ազգային, թե անդրազգային մակարդակով կամ անհատական կամ կազմակերպված կարգով՝

ա) 2-րդ հոդվածում սահմանված մանկավաճառության ենթատեքստում՝

i) ցանկացած միջոցով երեխա առաջարկելը, փոխանցելը կամ ստանալը՝

ա. երեխային սեռական շահագործման,

բ. վարձատրության դիմաց երեխայի օրգանների հանձնման,

գ. հարկադիր աշխատանքներում երեխայի օգտագործման նպատակով,

ii) որդեգրմանը վերաբերող կիրառելի միջազգային իրավական ակտերի խախտումով, որպես միջնորդ՝ երեխայի որդեգրմանը համաձայնելուն անօրինական հակելը,

բ) երեխային առաջարկելը, ստանալը, փոխանցելը կամ տրամադրելը՝ 2-րդ հոդվածով սահմանված՝ երեխայի մարմնավաճառության նպատակներով,

գ) վերոհիշյալ նպատակներով, որոնք սահմանված են 2-րդ հոդվածով, երեխաների պոռնոգրաֆիա արտադրելը, բաշխելը, տարածելը, ներմուծելը, արտահանելը, առաջարկելը, վաճառելը կամ պահելը:

2. Հաշվի առնելով մասնակից պետության ազգային օրենսդրության դրույթները՝ համանման դրույթներ են կիրառվում այդ արարքներից յուրաքանչյուրի կատարման ոտնձգության, ինչպես նաև այդ արարքներից յուրաքանչյուրի կատարման օժանդակության կամ հանցակցության նկատմամբ:

3. Յուրաքանչյուր մասնակից պետություն այդ հանցագործությունների համար նախատեսում է պատժի համապատասխան միջոցներ՝ ելնելով դրանց ծանրության աստիճանից:

4. Հաշվի առնելով իր ազգային օրենսդրության դրույթները՝ յուրաքանչյուր մասնակից պետություն համապատասխան դեպքերում միջոցներ է ձեռնարկում սույն հոդվածի 1-ին կետով նախատեսված հանցագործությունների համար իրավաբանական անձանց պատասխանատվությունը բացահայտելու ուղղությամբ: Նկատի ունենալով մասնակից պետության իրավական սկզբունքները՝ իրավաբանական անձանց այդ պատասխանատվությունը կարող է լինել քրեական, քաղաքացիական կամ վարչական:

5. Մասնակից պետությունները ձեռնարկում են բոլոր անհրաժեշտ իրավական և վարչական միջոցները՝ ապահովելու համար, որ բոլոր անձինք, ովքեր երեխայի որդեգրմանն առնչվում են, գործեն կիրառելի միջազգային իրավական ակտերի դրույթներին համապատասխան:

#### **Հոդված 4**

1. Յուրաքանչյուր մասնակից պետություն այնպիսի միջոցներ է ձեռնարկում, որոնք կարող են անհրաժեշտ լինել 3-րդ հոդվածի 1-ին կետում նշված հանցագործությունների նկատմամբ իր իրավասությունը հաստատելու համար՝ այն դեպքերում, երբ այդպիսի հանցագործությունները կատարվում են իր տարածքում կամ այդ պետությունում գրանցված ծովային կամ օդային նավում:

2. Յուրաքանչյուր մասնակից պետություն կարող է այնպիսի միջոցներ ձեռնարկել, որոնք կարող են անհրաժեշտ լինել 3-րդ հոդվածի 1-ին կետում նշված հանցագործությունների նկատմամբ իր իրավասության հաստատման համար՝ հետևյալ դեպքերում.

ա) երբ ենթադրյալ հանցագործը հանդիսանում է այդ պետության քաղաքացի կամ անձ, որի սովորական բնակության վայրը գտնվում է իր տարածքում,

բ) երբ զոհը հանդիսանում է այդ պետության քաղաքացի:

3. Յուրաքանչյուր մասնակից պետություն ձեռնարկում է նաև այնպիսի միջոցներ, որոնք կարող են անհրաժեշտ լինել վերոհիշյալ հանցագործությունների նկատմամբ իր իրավասությունը հաստատելու համար, երբ ենթադրյալ հանցագործը գտնվում է իր տարածքում, և ինքը նրան չի հանձնում մեկ այլ մասնակից պետության այն հիմքով, որ հանցագործությունը կատարվել է իր քաղաքացիներից որևէ մեկի կողմից:

4. Սույն Արձանագրությունը չի բացառում ներպետական իրավունքին համապատասխան իրականացվող ցանկացած քրեական իրավասություն:

#### **Յոթերորդ հոդված 5**

1. 3-րդ հոդվածի 1-ին կետում նշված հանցագործությունները, որպես հանձնում առաջացնող հանցագործություն, ենթակա են ներառման հանձնման մասին ցանկացած պայմանագրի մեջ, որը գոյություն ունի մասնակից պետությունների միջև, ինչպես նաև, որպես հանձնում առաջացնող հանցագործություններ, ներառվում են հանձնման մասին ցանկացած պայմանագրի մեջ, որոնք հետագայում կկնքվեն նրանց միջև՝ այդ պայմանագրերով սահմանված պայմաններին համապատասխան:

2. Եթե մասնակից պետությունը, որը հանձնումը պայմանավորում է պայմանագրի առկայությամբ, հանձնման մասին խնդրանք է ստանում մյուս մասնակից պետությունից, որի հետ չունի հանձնման մասին պայմանագիր, ապա նա այդպիսի հանցագործությունների նկատմամբ սույն Արձանագրությունը կարող է դիտել որպես իրավական հիմք՝ հանձնման համար: Հանձնումն իրականացվում է այն պետության օրենսդրությամբ նախատեսված պայմաններին համապատասխան, որին ուղղված է հանձնման մասին խնդրանքը:

3. Մասնակից պետությունները, որոնք հանձնումը չեն պայմանավորում պայմանագրի առկայությամբ, իրենց միջև հարաբերություններում այդպիսի հանցագործությունները, այն պետության օրենսդրությամբ նախատեսված պայմաններին համապատասխան, որին ուղղված է հանձնման մասին խնդրանքը, դիտում են որպես հանձնում առաջացնող հանցագործություններ:

4. Մասնակից պետությունների միջև այդպիսի հանցագործությունները հանձնման նպատակների համար դիտարկվում են ոչ միայն դրանք կատարվելիս դրանց կատարման վայրում, այլ նաև այն պետությունների տարածքներում, որոնք պարտավոր են իրենց իրավասությունը հաստատել 4-րդ հոդվածին համապատասխան:

5. Եթե հանձնման մասին խնդրանքը ստացվում է 3-րդ հոդվածի 1-ին կետում նշված հանցագործություններից մեկի առնչությամբ, և եթե մասնակից պետությունը, որին ուղղված է այդպիսի խնդրանքը, հանցագործին, նրա քաղաքացիության հիմքով, չի հանձնում կամ չի հանձնելու, ապա այդ պետությունը պատշաճ միջոցներ է ձեռնարկում քրեական հետապնդում հարուցելու նպատակով գործն իր իրավասու մարմիններին փոխանցելու համար:

## **Յ ո դ վ ա ճ 6**

1. Մասնակից պետությունները միմյանց առավելագույն օգնություն են ցույց տալիս 3-րդ հոդվածի 1-ին կետում նշված հանցագործությունների նկատմամբ սկսված հետաքննությունների կամ քրեական հետապնդման կամ հանձնման ընթացակարգերի կապակցությամբ, ներառյալ հիշյալ դատավարական գործողությունների կատարման համար անհրաժեշտ, իրենց մոտ առկա ապացույցների ստացման գործում աջակցություն ցույց տալը:

2. Մասնակից պետությունները սույն հոդվածի 1-ին կետով իրենց պարտավորությունները կատարում են՝ դեկլարավելով փոխադարձ իրավական օգնության մասին ցանկացած պայմանագրով կամ այլ պայմանավորվածությամբ, որը կարող է գոյություն ունենալ նրանց միջև:

Այդպիսի պայմանագրերի կամ պայմանավորվածությունների բացակայության դեպքում մասնակից պետությունները միմյանց օգնություն են ցույց տալիս իրենց ներպետական իրավունքին համապատասխան:

## **Յ ո դ վ ա ճ 7**

Մասնակից պետությունները, իրենց ազգային օրենսդրության դրույթներին համապատասխան՝  
ա) անհրաժեշտության դեպքերում միջոցներ են ձեռնարկում՝ ապահովելու հետևյալի առգրավումը և բռնագրավումը՝

- i) այնպիսի գույքի, ինչպիսիք են նյութերը, միջոցները և այլ սարքավորումը, որն օգտագործվում է սույն Արձանագրությամբ նախատեսված հանցագործությունների կատարման կամ կատարմանն աջակցելու համար,
- ii) այդպիսի հանցագործությունների կատարման հետևանքով ստացված եկամուտների,
- բ) կատարում են «ա» կետի i ենթակետում նշված գույքի կամ եկամուտների առգրավման կամ բռնագրավման վերաբերյալ մյուս մասնակից պետության խնդրանքները,
- գ) միջոցներ են ձեռնարկում այդպիսի հանցագործությունների կատարման համար օգտագործվող շինությունները ժամանակավոր կամ մշտական հիմքով փակելու ուղղությամբ:

## **Յ ո դ վ ա ճ 8**

1. Մասնակից պետությունները սույն Արձանագրությամբ արգելվող պրակտիկայի գոն դարձած երեխաների



իրավունքների և շահերի պաշտպանության համար քրեական դատավարության բոլոր փուլերում պատշաճ միջոցներ են ձեռնարկում, մասնավորապես, հետևյալ ճանապարհով՝

ա) գոհ երեխաների խոցելիության ճանաչման և նրանց բացառիկ կարիքների ճանաչման համար ընթացակարգերի հարմարեցման, այդ թվում՝ որպես վկա՝ նրանց առանձնահատուկ պահանջների,

բ) գոհ երեխաներին իրենց իրավունքների, իրենց դերի մասին, պահելու, դատավարության ժամկետների և ընթացքի մասին և իրենց գործերով որոշում կայացնելու մասին տեղեկացման,

գ) այն բանի ապահովման, որ դատավարության ընթացքում գոհ երեխաների կարծիքները, պահանջները և հիմնահարցերը, այն դեպքերում, երբ շոշափվում են նրանց անձնական շահերը, ներկայացվեն և քննարկվեն ազգային օրենսդրության դատավարական նորմերին համապատասխան,

դ) դատավարության բոլոր փուլերում գոհ երեխաներին պատշաճ օժանդակություն ցույց տալու ծառայություններ տրամադրելու,

ե) անհրաժեշտության դեպքերում գոհ երեխաների անձնական կյանքի և անձի պաշտպանության և, ազգային օրենսդրության համապատասխան, այնպիսի տեղեկության անցանկալի տարածումից խուսափելու նպատակով միջոցներ ձեռնարկելու, որը կարող է հանգեցնել գոհ երեխաների անձի բացահայտմանը,

զ) անհրաժեշտության դեպքերում՝ վախեցնելուց և ներգործության միջոցներ կիրառելուց գոհ երեխաների, ինչպես նաև նրանց ընտանիքների և նրանց անունից հանդես եկող վկաների պաշտպանությունն ապահովելու,

է) գոհ երեխաներին փոխհատուցում տրամադրելու մասին գործերով որոշումներ կայացնելու և կարգադրությունների ու վճիռների կատարման չափազանց մեծ ուշացումներ թույլ չտալու:

2. Մասնակից պետություններն ապահովում են, որ գոհի իրական տարիքի հետ կապված կասկածների առկայությունը չխոչընդոտի քրեական հետաքննության սկսմանը, ներառյալ գոհի տարիքը պարզելու նպատակով հետաքննությունը:

3. Մասնակից պետությունները ապահովում են, որ քրեական դատավարության համակարգում երեխաների հետ վարվելիս, որոնք համարվում են սույն Արձանագրությամբ նախատեսված հանցագործությունների գոհ, առաջնահերթ ուշադրություն դարձվի երեխայի շահերի լավագույն պահպանմանը:

4. Մասնակից պետությունները միջոցներ են ձեռնարկում սույն Արձանագրությանը համապատասխան արգելված հանցավոր գործողությունների գոհ երեխաների հետ աշխատող անձանց պատշաճ պատրաստականության, մասնավորապես, իրավաբանական և հոգեբանական ապահովման համար:

5. Մասնակից պետություններն անհրաժեշտության դեպքերում միջոցներ են ձեռնարկում այն անձանց և/կամ կազմակերպությունների անվտանգության և անձեռնմխելիության ապահովման ուղղությամբ, ովքեր զբաղվում են կանխարգելիչ գործունեությամբ և/կամ այդպիսի հանցագործությունների գոհերի պաշտպանությամբ և վերականգնմամբ:

6. Ոչինչ սույն հոդվածում չի մեկնաբանվում որպես վնաս պատճառող կամ արդար և անաչառ դատաքննության նկատմամբ մեղադրյալի իրավունքներին հակասող:

## **Յ ո դ վ ա ծ 9**

1. Սույն Արձանագրության մեջ նշված հանցագործությունների կանխարգելման նպատակով մասնակից պետությունները ընդունում և ամրապնդում են, կիրառում և քարոզում են օրենքներ, վարչական միջոցներ, սոցիալական ռազմավարություններ և ծրագրեր: Հատուկ ուշադրություն է դարձվում այն երեխաների պաշտպանությանը, ովքեր հատկապես խոցելի են այդպիսի պրակտիկայից:

2. Մասնակից պետությունները աջակցում են հասարակայնության լայն շրջանակների, ներառյալ երեխաները, իրազեկման բարձրացմանը բոլոր համապատասխան միջոցների օգտագործմամբ տեղեկատվականացման, սույն Արձանագրության մեջ նշված հանցագործությունների նախագուշակական միջոցների և դրանց վնասակար հետևանքների առնչությամբ լուսավորման և ուսուցման ապահովման ճանապարհով: Սույն հոդվածով իրենց պարտավորությունների կատարման ընթացքում մասնակից պետությունները խրախուսում են հասարակության և, մասնավորապես, երեխաների և գոհ երեխաների մասնակցությունը այդպիսի տեղեկատվական-լուսավորչական և

ուսումնական ծրագրերում, այդ թվում՝ միջազգային մակարդակով:

3. Մասնակից պետությունները ձեռնարկում են բոլոր հնարավոր միջոցները այդպիսի հանցագործությունների գոհերին հարկ եղած ցանկացած օգնություն ցույց տալն ապահովելու նպատակով, ներառյալ նրանց լիակատար սոցիալական վերաինտեգրումը և նրանց լիակատար ֆիզիկական և հոգեբանական վերականգնումը:

4. Մասնակից պետությունները ապահովում են, որ սույն Արձանագրության մեջ նշված հանցագործությունների բոլոր գոհ երեխաները, առանց որևէ խտրականության, հասու լինեն հասցված վնասի համար իրավաբանական պատասխանատվություն կրող անձանցից փոխհատուցում ստանալու պատշաճ ընթացակարգերին:

5. Մասնակից պետությունները պատշաճ միջոցներ են ձեռնարկում սույն Արձանագրության մեջ նշված հանցագործությունները քարոզող նյութերի արտադրության և տարածման գործնական արգելման ապահովման ուղղությամբ:

### **Յ ո գ վ ա ծ 10**

1. Մասնակից պետությունները ձեռնարկում են բոլոր անհրաժեշտ միջոցները միջազգային համագործակցության ամրապնդման ուղղությամբ՝ մանկավաճառության, երեխաների մարմնավաճառության, մանկական պոռնոգրաֆիայի և երեխաների սեռազբոսաշրջության հետ կապված արարքների կատարման մեջ մեղավոր անձանց նախազգուշացման, բացահայտման, հետաքննության, քրեական հետապնդման և պատժելու նպատակներով բազմակողմ, տարածաշրջանային և երկկողմ պայմանավորվածությունների կնքման միջոցով: Մասնակից պետությունները աջակցում են նաև միջազգային համագործակցությանը և համակարգմանը իրենց մարմինների, ազգային և միջազգային ոչ կառավարական կազմակերպությունների ու միջազգային կազմակերպությունների միջև:

2. Մասնակից պետությունները աջակցում են միջազգային համագործակցության զարգացմանը, որն ուղղված է գոհ երեխաներին օգնություն ցույց տալուն՝ նրանց ֆիզիկական և հոգեբանական վերականգնման, սոցիալական վերաինտեգրման և հայրենադարձության գործում:

3. Մասնակից պետությունները աջակցում են միջազգային համագործակցության ամրապնդմանը՝ այնպիսի հիմնական պատճառները վերացնելու նպատակով, ինչպիսիք են չքավորությունը և անբավարար զարգացումը, որոնք խորացնում են երեխաների խոցելիությունը՝ որպես երեխաների առևտրի, երեխաների մարմնավաճառության, մանկական պոռնոգրաֆիայի և երեխաների սեռազբոսաշրջության օբյեկտներ:

4. Մասնակից պետությունները, որոնք դրա համար համապատասխան հնարավորություններ ունեն, առկա բազմակողմ, տարածաշրջանային, երկկողմ կամ այլ ծրագրերի շրջանակներում ցույց են տալիս ֆինանսական, տեխնիկական կամ այլ օգնություն:

### **Յ ո գ վ ա ծ 11**

Սույն Արձանագրության դրույթներից որևէ մեկը չի ազդում երեխայի իրավունքների ավելի նպաստավոր դրույթների իրականացմանը, որոնք կարող են պարունակվել՝

- ա) մասնակից պետության օրենսդրության մեջ,
- բ) այդ պետության համար գործող միջազգային իրավունքի նորմերում:

### **Յ ո գ վ ա ծ 12**

1. Յուրաքանչյուր մասնակից պետություն այդ մասնակից պետության համար սույն Արձանագրության ուժի մեջ մտնելուց հետո՝ երկու տարվա ընթացքում, Երեխայի իրավունքների հարցերով Կոմիտեին զեկույց է ներկայացնում, որը պարունակում է սույն Արձանագրության դրույթների իրականացման նպատակներով իր կողմից ձեռնարկված միջոցների մասին համընդգրկուն տեղեկատվություն:

2. Համընդգրկուն զեկույց ներկայացնելուց հետո յուրաքանչյուր մասնակից պետություն, Կոնվենցիայի 44-րդ

հողվածին համապատասխան, Երեխայի իրավունքների հարցերով Կոմիտեին ներկայացվող զեկույցներում ընդգրկում է Արձանագրության իրականացմանը վերաբերող ցանկացած լրացուցիչ տեղեկատվություն: Արձանագրության մասնակից մյուս պետությունները զեկույց են ներկայացնում յուրաքանչյուր հինգ տարին մեկ:

3. Երեխայի իրավունքների հարցերով Կոմիտեն մասնակից պետություններից կարող է պահանջել սույն Արձանագրության իրականացմանը վերաբերող լրացուցիչ տեղեկատվություն:

### **Յ ո դ վ ա ծ 13**

1. Սույն Արձանագրությունը բաց է յուրաքանչյուր պետության ստորագրման համար, որը հանդիսանում է Կոնվենցիայի մասնակից կամ այն ստորագրել է:

2. Սույն Արձանագրությունը ենթակա է վավերացման և բաց է յուրաքանչյուր պետության միանալու համար, որը հանդիսանում է Կոնվենցիայի մասնակից կամ ստորագրել է այն: Վավերագրերը կամ միանալու մասին փաստաթղթերն ի պահ են տրվում Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին:

### **Յ ո դ վ ա ծ 14**

1. Սույն Արձանագրությունը ուժի մեջ է մտնում տասներորդ վավերագիրը կամ միանալու մասին փաստաթուղթն ի պահ տալու օրվանից երեք ամիս հետո:

2. Յուրաքանչյուր պետության համար, որը սույն Արձանագրությունը վավերացնում կամ դրան միանում է դրա ուժի մեջ մտնելուց հետո, սույն Արձանագրությունը ուժի մեջ է մտնում վավերագիրը կամ միանալու մասին փաստաթուղթն ի պահ տալուց հետո մեկ ամիս անց:

### **Յ ո դ վ ա ծ 15**

1. Յուրաքանչյուր մասնակից պետություն ցանկացած ժամանակ կարող է չեղյալ հայտարարել սույն Արձանագրությունը Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին գրավոր տեղեկացնելու միջոցով, որն այնուհետ այդ մասին տեղեկացնում է Կոնվենցիայի մյուս մասնակից պետություններին և Կոնվենցիան ստորագրած բոլոր պետություններին: Չեղյալ հայտարարելն ուժի մեջ է մտնում այդպիսի ծանուցումը Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարի ստանալուց հետո՝ մեկ տարի անց:

2. Այդպիսի չեղյալ հայտարարելը մասնակից պետությանը չի ազատում սույն Արձանագրությամբ ստանձնած պարտավորություններից ցանկացած այն հանցագործության նկատմամբ, որը կատարվել է մինչև չեղյալ հայտարարման ուժի մեջ մտնելը: Հավասարապես այդպիսի չեղյալ հայտարարելը ոչ մի կերպ չի խոչընդոտում ցանկացած հարցի հետագա քննարկմանը, որը մինչև չեղյալ հայտարարման ուժի մեջ մտնելը արդեն գտնվում է Կոմիտեի քննարկման ներքո:

### **Յ ո դ վ ա ծ 16**

1. Յուրաքանչյուր մասնակից պետություն կարող է ուղղում առաջարկել և այն ներկայացնել Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին: Այնուհետև Գլխավոր քարտուղարն առաջարկված ուղղումն ուղարկում է մասնակից պետություններին՝ խնդրելով նշել՝ արդյոք նրանք արտահայտվում են այդ առաջարկների քննարկման և դրանով քվեարկության անցկացման նպատակով մասնակից պետությունների համաժողով գումարելու օգտին: Եթե, այդպիսի հաղորդման ժամկետից սկսած, չորս ամսվա ընթացքում մասնակից պետությունների առնվազն մեկ երրորդը կողմ է արտահայտվում այդպիսի համաժողովին, ապա Գլխավոր քարտուղարը գումարում է այդ համաժողովը Միավորված ազգերի կազմակերպության հովանու ներքո: Յուրաքանչյուր ուղղում, որն ընդունվում է այդ համաժողովում ներկա գտնվող և մասնակցող մասնակից

պետությունների մեծամասնությամբ, ներկայացվում է Գլխավոր ասամբլեայի հաստատմանը:

2. Սույն հոդվածի 1-ին կետին համապատասխան ընդունված ուղղումը ուժի մեջ է մտնում Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր ասամբլեայի կողմից դրա հաստատվելուց և մասնակից պետությունների ձայների երկու երրորդի մեծամասնությամբ դրա ընդունվելուց հետո:

3. Երբ ուղղումն ուժի մեջ է մտնում, այն պարտադիր է դառնում մասնակից պետությունների համար, որոնք այն ընդունել են, իսկ մյուս մասնակից պետությունների համար պարտադիր են մնում սույն Արձանագրության դրույթները և ցանկացած նախորդող ուղղումը, որոնք նրանց կողմից ընդունվել են:

## **Յ ո դ վ ա ճ 17**

1. Սույն Արձանագրությունը, որի անգլերեն, արաբերեն, իսպաներեն, չինարեն, ռուսերեն և ֆրանսերեն տեքստերը հավասարազոր են, ի պահ կհանձնվի Միավորված ազգերի կազմակերպության արխիվներին:

2. Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարը սույն Արձանագրության հաստատված պատճենները կուղարկի սույն Կոնվենցիայի բոլոր մասնակից պետություններին և Կոնվենցիան ստորագրած բոլոր պետություններին:

*Ուժի մեջ է մտել 30.07.2005թ.*